

Օ Ր Ե Ր Լ Է Ն Ե Ր Ը *)

Վ Է Գ

Ր Ե Ն Է Բ ա գ Է Ն Ի

XIII

Օ Ր Ե Ր Ն Է Ի պ ա Ր Ի ս պ Ն Ե Ր Ը

Տասն օր յետոյ, Լիւսիէնն ու մայքը մտան այն տունը, ուր տիկին Օրերլէ անցկացրել էր իր ամբողջ երեխայութիւնը, Բիշլէրների տունը, որ իր երեք յարկերը՝ կանաչ փոքրիկ ապակեօր պատուհաններով և եռանկիւնի կատարով՝ բարձրացնում էր Օրերլէի վաղեմի պարիսպներից վերև, երկու բոլորովին միօրինակ և միևնույն—տասնակեցերորդ դարից մնացած տների մէջտեղ:

Տիկին Օրերլէ սանդուխներից բարձրացել էր պահապանին ասելով.

—Քիչ յետոյ մի պարոն պէտք է գայ և ինձ հարցնէ, ընդունեցէ՞ք նրան:

Նա մտել էր սուաջին յարկի մեծ սենեակը, որ մէկն էր կահաւորուած փոքրաթիւ սենականներից և ուր տեսել էր իր ծնողների ապրելն ու մեռնելը. կաղնեայ մահճակալ, մուգ յաւաճապակեայ վառարան, աթոռներ՝ ծածկուած՝ բրդեայ սփռոցով, մի խաչկութիւն, շրջանակուած՝ գոգաւոր ապակով, 1837 թուին Իտալիայում կատարուած մի ճանապարհորդութիւնից բերուած երկու տեսարաններ—այդ բոլորը մնացել էին իրանց տեղում և միևնոյն կարգով: Շէմքից անցնելիս, բնազդաբար նա փնտոնեց օրհնուած ջրի ամանը, որ կախուած էր դրան վերևի սեամից, և ուր հները, երբ սենեակ էին մտնում, կոխում էին իրանց մատները, ինչպէ մի սրբավայրի շէմքից անցնելիս:

*) Տես «Մուրճ» № 11—12:

Երկու կանայք գնացին պատուհանի մօտ Տիկին: Օրերէ հազել էր նոյն այն սև շրջագգեստը, որ կրում էր Սարազուրգի նահանգապետին ընդունելիս: Լիւսիէն, իր երանգաւոր խարտեաշ մաղերի վրայ, կարծես նրանց ստուերով քօղարկելու համար, դրել էր մի յարդեայ, լայնեզր, մոխրագոյն գլխարկ, զարդարուած միկնոյն գոյնի փետուրներով: Մայրը նրան գեղեցիկ էր գտնոււմ, բայց նրան այդ մասին ոչինչ չէր ասոււմ: Նա սիրով կ'ասէր այդ, եթէ նշանածը չլինէր այն անձը, որին սպասոււմ էին, և եթէ հէնց տան տեսքը և նրանու ընակուող պատուական ալգասեցիկների հետ յիշողութիւնները աւելի ևս սաստկացած չլինէին իր զգացած վիշտը:

Նա գլուխը յենեց ապակիներին և նայեց վար, պարտիզում, գնդաձև կտրուած մացառներին, օձապտոյտ և նեղ ծառուղիներին, ուր նա խաղացել, մեծացել, երազել էր: Պարտիզի այն կողմ, քաղաքի պարիսպների վրայ հաստատուած էր զբօսարանը, և այնտեղ, միջանի քայլ հեռու տնկուած շագանակիներէ արանքից բացոււմ էր կապոյտ դաշտը:

Լիւսիէն, որ Օրէրնէ գալուց իվեր դեռ բերանն անգամ չէր բացել, վախենալով որ մի գուցէ վրդովէ մի հոգու, որ ինքն իրան հարց էր տալիս, թէ արդեօք կարող պիտի լինի՞ կատարելու իր գոհարեութիւնը մինչև վերջը—մօտեցաւ իր մօրը, և հարցրեց ըստ երևոյթին յուզիչ ձայնով.

—Մայրիկ, երևի դուք շատ էք պարապոււմ: Նկատի ունենալով ձեր համոզմունքները, ձեր արածը համարեա հերոսութիւն է:

Մայրը աչքերը չբարձրացրեց, բայց արտասունքները աւելի շուտ բթթեցին:

—Ինչ որ անոււմ էք, թելադրոււմ է ձեզ կնոջ սիրտը և ես, դրա համար, հիանալի եմ գտնոււմ ձեր վարմունքը: Ինձ թոււմ է որ ես ձեր արածը չպիտի կարողանայի անել—հրաժարուել, միչև այդ աստիճան, իմ անձնականութիւնից:

Նա չէր կարծոււմ որ իր խօսքերն անողորմ են:

—Ուրեմն դու ուզոււմ ես ամուսնանալ, հարցրեց մայրը յանկարծ գլուխը բարձրացնելով:

—Անկասկած, այո: Այժմ մենք ձեզ նման չենք նայոււմ ամուսնութեան վրայ:

Մայրը Լիւսիէնի ծիծաղից հետեցրեց, որ ամուսնութեան գաղափարը մեխուած էր աղջկայ ուղեղում և վիճաբան համար ըսպէն անյարմար համարելով՝ լռեց:

—Ես երախտապարտ եմ ձեզ, շարունակեց երիտասարդ աղջիկը:

Յետոյ մի ըողէ վարանելով.

— Բայց և այնպէս, ի հարկէ դուք եկաք այստեղ և յանձն առիք ընդունել պ. զը Ֆարնովինն ոչ թէ հօրս կամքը կատարելու համար, այլ...

Նա աչքերն ածեց սենեակի շուրջը և բեռեց իր մօր վրայ, որը տառապում էր: Այս վերջինը անմիջապէս պատասխանեց.

— Այո, ոչ թէ հօրդ հնազանդութիւնը համար:

— Ես համոզուած էի: Բայց ի՞նչը ձեզ դրդեց:

— Քիչ յետոյ կ'իմանաս:

— Պ. Ֆարնովի առաջ պիտի ասես:

— Այո:

Լիւսիէնի դէմքի վրայ գծագրուեց խոր դժգոհութիւն:

— Ժիշդ է մենք ըլլորովին հակակարծիք ենք միմիանց, բայց ես չեմ հաւատում, որ դուք կարող կը լինէք իմ նշանածին ինձանից բաժանել:

Տիկին Օրերլէի արտեանունքների անկիւնում երեւցան արտասուքի երկու կաթիլներ:

— Օհ, Լիւսիէն:

— Ո՛չ... Ձեմ հաւատում... Ձեր յայտնելիքը շատ կարեւոր է:

— Այո:

— Ի՞նչ մասին է:

— Ո՛չ, բո մասին չէ:

Երիտասարդ աղջիկը բաց արեց բերանը խօսքը շարունակելու համար, յետոյ լռեց, մի քիչ դժգոհութեան և ամբողջապէս դարձաւ դէպի դուռը, մինչդեռ մայրը միայն կիսով չափ դառնում էր միկնոյն կողմը: Մէկը բարձրանում էր սանդուխներից: Դա Վիլհելմ ֆոն Ֆարնովինն էր. նրա առաջից գնում էր դռնապանուհին, որը բարձրացաւ մինչև սանդուխի գլուխը և յետ դարձաւ: Ֆարնովի դռան բացուածքից նշմարեց տիկին Օրերլէին և ինքնամիովութեամբ՝ որպէս զօրահանդէսում, և արագաքայլ անցնելով սենեակի միջից, եկաւ խոնարհեցրեց իր գոռոզ գլուխը նախ մօրը և ապա երիտասարդ աղջկայ առաջ:

Նա կրում էր քաղաքացիական շորեր և շատ վայելուչ տեսք ունէր: Յուզմունքը դժգոհեցնում և ախօսում էր նրա դէմքը: Նա արտասանեց ֆրանսերէն, ծանր, ծանր.

— Ծնորհակալ եմ ձեզանից, տիկին:

Յետոյ նայեց Լիւսիէնին, և նրա կապոյտ, անժպիտ աչքի մէջ փայլատակեց հպարտ ուրախութեան մի կայծ:

Երիտասարդ աղջիկը ծիծաղեց:

Տիկին Օրերլէ բարկութիւնից ցնցուեց, բայց աշխատեց

զսպել ինքն իրան։ Նա շեշտակի նայեց Վիլհելմ ֆոն Ֆարնովի կարծր-կապոյտ աչքերին։ Տեղակալը անշարժ կանգնել էր զինուորականի դիրքով, որպէս մի մեծ պետի առաջ։

— Ինձնից չպէտքէ շնորհակալ լինել, պարոն։ Ես ոչ մի դեր չունեմ այս գործում։ Ամուսինս ու աղջիկս են որոշել ամեն ինչ։

Դը Ֆարնով նորից խոնարհութիւն արեց։

— Ես կը ցանկայի ազատ լինել մերժելու ձեր ցեղը, ձեր կրօնքը, ձեր բանակը, որոնք իմը չեն... Ինչպէս տեսնում էք ես ձեզ հետ անկեղծ եմ խօսում... Ես ուզում եմ ձեզ անպատճառ յայտարարել, որ ոչինչ պարտական չեք ինձ... Բայց որ նոյնպէս ես ոչ մի անարդար թշնամութիւն չունեմ ձեզ դէմ։ Ես հաւատում եմ նոյնիսկ, որ դուք մի պատուական զինուոր էք, և մի յարգելի անձնաւորութիւն։ Այնքան հաստատապէս հաւատում եմ, որ ձեզ պիտի հաղորդեմ մի մտահոգութիւն, որը տանջում է ինձ անդադար...

Նա մի րոպէ վարանեց և շարունակեց.

— Ալլէյմով մի սարսափելի տեսարան տեղի ունեցաւ, երբ կոմս դը Կասսըվեցը այցելութեան եկաւ մեզ մօտ...

— Կոմս դը Կասսըվեցը պատմեց ինձ բոլորը, տիկին։ Նա նոյնիսկ խորհուրդ տուեց ինձ հրաժարուել օրինորդ Լիւսիէնից։ Բայց ես չեմ հրաժարուում։ Որպէսզի հրաժարուեմ, պէտք է որ...

Նա սկսեց ծիծաղել.

— ...Պէտք է որ Կայսն իսկ հրամայէր։ Ինչպէս ասացիք ես պատուական զերմանացի եմ, և հեշտութեամբ չեմ հրաժարուի իմ յաղթանակի պտուղներից։ Եւ պ. դը Կասսըվեցը իմ հօրեղբայրն է, ուրիշ ոչինչ։

— Բայց դուք չգիտէք այն, որ իմ կեսրայրը, որ երկար տարիներից իվեր կորցրել է իր խօսելու կարողութիւնը, իր զայրոյթի, իր ծայրայեղ ցաւի մէջ խօսեց առաջին անգամ։ Նա աղաղակեց ժանին. «Կորիւր, կորիւր»։ Ես ինքս լսեցի այդ խօսքերը և վազեցի նրա մօտ։ Լաւ ուրեմն, պարոն, ինձ ամենից աւելի յուզողը այն չէր, որ ես տեսայ պ. Ֆիլիպ Օրերլէին ուշաթափ եղած, ձգուած՝ սրահի գորգի վրայ. ոչ, այլ իմ որդու դէմքի արտայայտութիւնը, այն է, համոզում թէ նա այդ րոպէից վճռել է արդէն թողնել, հեռանալ Ալլապից։

— Օ՛հ, բացազանչեց Ֆարնով, լաւ չէր լինի այդ։

Մի հայեացք գցեց գեղանի Լիւսիէնի վրայ, և տեսաւ, որ, իբրեւ ժխտումի նշան, ցնցումէր խարտեալ մազերը։

— Այո, լաւ չէր լինի, շարունակեց մայրը, առանց իմանալու թէ ի՞նչ մտքով էր գործածել Ֆարնով այդ խօսքերը։ Ինչպիսիք

ձերութիւնս պիտի լինի իմը, իմ երկպառակուած ընտանիքի մէջ, առանց իմ աղջկան, որը դուք խլում էք ինձանից, առանց իմ որդու, որը ահա մեկնում է... Դուք գուցէ զարմանում էք, որ ես ձեզ հաղորդակից եմ անում մի այսպիսի մտատանջութեան...

Դը Ֆարնով խոսսափոխական մի շարժում գործեց:

— Ես ձեզ հաղորդեցի այս բոլորը նրա համար, շարունակեց մայրը աւելի թափով, որ ես ներկայ դէպքում ոչ մի խորհրդատու, ոչ մի օգնական չունիմ: Լաւ մտածեցէք: Ես ունեմ դիմեմ: Ամուսնուհիս՝ Նա պիտի բարձրանայ. իսկոյն իմ որդու ընթացքի դէմ պիտի մաքառի. սրա, նրա ազդեցութեան պիտի դիմէ, և ութ օրից մենք պիտի լսենք որ ժանը մտել է կայսրութեան հիւսիսային կամ արեւելեան բանակը, իբրեւ զինուոր... Ասացէք, ունեմ դիմեմ. իմ եղբօրը՝ Նա աւելի շուտ կը դրդէ իմ որդուն հեռանալ Ալգասից... Ինչպէս տեսնում էք, պարոն, միայն դուք էք մնում, որ կարող էք մի ճար գտնել իմ ցաւին...

— Իսկապէս ի՞նչ ճար, տիկին:

— Շատ... Ժանը խոստացել է ինձ մտնել բանակ: Դուք կարող էք այնպէս անել որ լաւ ընդունեն նրան բանակում, որպէսզի չխրանի, դուք կարող էք նրա համար պաշտպաններ, ծանօթներ, ընկերներ գտնել, նրա հետ խօսել... Վաղուց է դուք ճանաչում էք նրան... Դուք կարող էք արգելել նրան, որ անձնատուր չլինի նա իր մօայլ մտքերին, չգործադրէ, եթէ նորից փորձի, իր մտադրութիւնը:

Տեղակալը խիստ յուզուած՝ յօնքերը կիտեց, այլայլուեց տիկին Օրերլէի վերջին խօսքերից յետոյ:

— Տիկին, ասաց, մինչև հոկտեմբերի 1-ը ձեր որդին խոստացել է ձեզ մնալ Ալշէյմում: Այնուհետև ես ինձ վրայ եմ առնում պահել նրան:

Յետոյ, ինքնիրան խօսելով, ընկդմուած՝ մի մտածմունքի մէջ, որը ամբողջապէս չէր արտայայտում.

— Այո, մրմնջաց, շատ վատ... չպէտք է:

Լիւսիէն լսեց:

— Էհ, ինչ արած: Ես կը յայտնեմ իմ եղբօր գաղտնիքներից մէկը: Բայց նա ինձ կը ներէ, երբ իմանայ, որ գաղտնիքը պարզել եմ մօրս խաղաղացնելու համար... Մայրիկ, հանդիստ կացէք. Ժանը չի հեռանայ Ալգասից:

— Որովհետեւ...

— Նա էլ սիրում է:

— Ո՞ւմ, որտե՞ղ:

— Ալշէյմում, Օդիլ Բաստիանին:

Տիկին Օրերլէ հարցրեց, ուրախութիւնից յուզուած.

— Իսկապէս, ճիշտ է:

— Նոյնքան ճիշտ, որքան յայտնի է թէ մենք այստեղ ենք և ոչ ուրիշ տեղի. Նա ինքն է ինձ պատմել:

Մայրը փակեց աչքերը, և, յուզուածից համարեա շնչահեղձ եղած, հեիհե.

— Փնռք Աստուծոյ... վերջապէս ծագում է ինձ համար յոյսի մի նշոյլ... Թողէք որ լաց լինեմ: Մեծ կարիք ունեմ արտասուելու:

Ձեռքով ցոյց տուեց, սանդուխի միւս կողմում, մի սենեակ, որի դուռը նոյնպէս բաց էր և լուսաւորուած՝ մի մեծ պատուհանով, որի միջից նշմարուում էր մի ծառ:

Ֆարնով խոնարհեց իր բարձր հասակը ցոյց տալով Լիւսիէնի, որ պատրաստ էր նրան հետևելու: Եւ երիտասարդ աղջիկը ուղղուեց դէպի դուռն անցնելով այն սենեակից, ուր իր նախահայրերը այնքան սիրել էին Ալզասը:

Տիկին Օրերլէ դէմքը շուռ տուեց պատուհանի մօտիկ նստած՝ ճակատը յենեց ապակիին իրին, որտեղից դիտել էր իր երեխայութեան ժամանակ արդասական ամբողջ երկիրը: «Օդիլ Բաստիան, Օդիլ», կրկնում էր խեղճ կինը: Մօր երեակայութեան մէջ ծնունդ էր առնում ջահէլ աղջկայ պայծառ դէմքը, ժպիտը, շրջազգեստը, Ալշէյմի այն անկիւնը, ուր նա ապրում էր գեղեցկութեան, բարոյական առողջութեան մի ամբողջ քերթուած: «Խնչճւ համար ժանը ինձ չյայտնեց իր ծրագիրը, մըտածում էր: Սա մի փոխարինութիւն է միւսին... Այժմ ես հանգիստ եմ... Իմ ժանը չպիտի բաժանուի ինձանից, բանի որ կապերից ամենաուժեղը կապում է նրան Ալզասի հետ... Վերջ ի վերջոյ գուցէ մեզ աջողուի յաղթել ամուսնուս յամառութիւնը.. Ես նրան պարզ կերպով ցոյց կը տամ այն զոհողութիւնը որ կատարում ենք ժանն ու ես, ընդունելով այդ գերմանացուն...»

Նոյն բոպէին, հանդիպակայ սենեակից, ուր բացի երկու ասթուից ոչ մի կահ չկար, Լիւսիէնն ու Ֆարնովը կողք կողքի նստած՝ Լիւսիէն մի արժուկը յենած բաց պատուհանի վանդակին, տեղակալը փոքր ինչ յետև, նրան դիտելով և նրա հետ սաստիկ ոգևորութեամբ խօսելով, — երբեմն գալիս էին ծիծաղի աղմուկներ: Տիկին Օրերլէին վիրաւորում էին այդ քրքիջները, բայց նա ետ չէր դառնում: Նա շարունակում էր նայել, արդասական դաշտերի խուսափուկ կապոյտի մէջ, սիւփփիչ պատկերը, որ արթնացրել էր Լիւսիէն իր երեակայութեան առաջ:

Վիյհելմ ֆոն Ֆարնով՝ այդ միջոցում խօսում էր և օգտը-

ւում էր այդ սուղ ժամից իրան հասկացնելու համար Լիւսիէնին։ Այս վերջինը մտիկ էր անում, ըստ երեւոյթին մոլար հայացքով և երազուն, բայց իտկապէս ուշադրութեամբ, իր պատասխանները մի ծիծաղով կամ ուշադրի նշանակալից մի կծկումով ընդգծելով։

Գերմանացին ասում էր. «Դուք ինձ համար կազմում էք մի փառաւոր յաղթանակ։ Իմ գնդի սպաների մէջ պիտի լինէք որպէս թագուհի... Պրանսիական ծագումից, բայց Աւստրիայում ծնուած մի կին էլ կայ, սակայն նա տգեղ է։ Կայ և մի խալուհի, կան գերմանուհիներ և անգլուհիներ։ Դուք, օրիորդ, միայն դուք կրում էք նրանց բոլորի շնորհների գումարը. գեղեցկութիւն, սրամտութիւն, փայլ, գերմանական դաստիարակութիւն և ֆրանսիական ինքնարուղի ոգին... Հէնց որ ամուսնանանք ևս ձեզ կը մտցնեմ Բերլինի բարձր շրջաններում... Ինչպէս կարողացաք դուք ապրել, մեծանալ Ալշէյմում...»

Լիւսիէն աւելի գոռոզ, քան քնքոյշ հոգի ունէր, և դրա համար էլ այդ տեսակ փաղաքշանքները դուր էին գալիս նրան։

Նոյն ժամին, օգտուելով այն դէպքից, որ պ. Ժոզէֆ Օրերլէ բացակայ էր—նա գնացել էր Բարր—պ. Ուլրիխ այցելութեան էր եկել իր քրոջ որդուն, Ժանին։

Երիտասարդի զօրանոց մտնելու օրերը մօտեցել էին։ Պէտք էր նրան յայտնել վերջապէս Օդիլ Բաստիանի հօր մօտ կատարուած դիմումի անյաջողութեան մասին։ Պ. Ուլրիխ՝ երկար վարանելուց յետոյ, համոզուած լինելով, որ աւելի դժնդակ էր մի երիտասարդ սէր ջախջախել քան պատերազմի գնալ, մտաւ իր քրոջորդու մօտ, և ասաց նրան ամեն բան։ Մի ժամից իվեր խօսում էին, կամ աւելի ճիշտ մօրեղբայրը մենախօսում և աշխատում էր մխիթարել Ժանին, որ նրա առաջ բաց էր արել իր վշտոտ սիրտը և լաց էր լինում առանց քաշուելու։

—Լաց, փոքրիկս, ասում էր մօրեղբայրը։ Հէնց այս բոլորի մայրդ ներկայ է լինում Լիւսիէնի և միւսի առաջին տեսակցութեան։ Սոստովանում եմ, որ ես նրան չեմ հասկանում... Լաց, բայց մի վհատուի։ Պէտք է որ վաղը դու քաջ լինես։ Մտածիր, որ երեք շաբաթից յետոյ դու զօրանոցում պիտի լինես։ Չպէտք է որ նրանք տեսնեն քո լաց լինելը։ Է՛հ տարին մի կերպ կ'անցկենայ, դու կը վերադառնաս մեզ մօտ, և, ո՛վ է իմանում...

Ժան սրբեց իր արտասուքները, և վճռապէս ասաց.

—Ո՛չ, մօրեղբայր։

—Ի՞նչ, ո՛չ։

Այն միևնոյն տեղում, ուր անցեալ ձմեռ, երկուսը միասին նստած այնքան զուարճութեամբ խօսել էին ապագայի մասին, նստել էին և այժմ, մէկը՝ բազմոցի մի ծայրին, միւսը՝ միւս ծայրին: Դրսում արեգակը խոնարհուած էր, ճառագայթաբաժակ դեռ ևս և տաք: Պ. Ուլրիխ յանկարծ ժանի ցաւագին դէմքի վրայ գտաւ կորովի այն արտայայտութիւնը, որ նրան այն անգամ զարմացրել, հիացրել էր: Վօժերի գոյնն ունեցող աչքերը, երկար յօնքերի տակ, խուսափուկ ցոլքերով լցուեցին: Եւ սակայն բիրերը անշարժ մնացին:

— Ո՛չ, կրկնեց ժան: Պէտք է որ դուք այդ գիտեմաք, դուք, ինչպէս և մի ուրիշը, որին պիտի ասեմ. ևս չպէտք է անեմ իմ զինուորական ծառայութիւնն այստեղ:

— Ապա ռրտեղ պիտի անես:

— Ֆրանխայում:

— Ի՞նչ ես ասում: Լէւրջ:

— Կատարալպէս լուրջ:

— Եւ շուտով պիտի մեկնես:

— Ո՛չ, դօրաբանակ մտնելուց յետոյ:

Պ. Ուլրիխ բարձրացրեց թևերը.

— Դու գժուե՞լ ես, ի՞նչ: Դու ուզում ես փախչել հէնց այն ժամանակ, երբ ամենից աւելի դժուար է և վտանգաւոր: Դու գժուել ես:

Սկսեց երթեկեկ սենեակում, պատուհանի առաջից մինչև դիմացի պատը: Յուզումից նա մեծ շարժումներ էր անում, և սակայն նա աշխատում էր ցածր խօսել, որպէսզի տան մարդիկ չլսեն նրանց:

— Ինչո՞ւ համար յետոյ: Վերջապէս ասա տեսնեմ ինչո՞ւ յետոյ. ես քեզ չեմ հասկանում: Ինչո՞ւ:

— Ես մտադրել էի մեկնել. նախ քան բանակ մտնելս, ասաց անվրդով երիտասարդը: Բայց մայրիկը դուշակել էր իմ մտադրութիւնը և ինձ երդուել տուեց, որ չգնամ, մտնեմ դօրանոց: Հետևաբար պիտի մտնեմ: Մի՛ փորձէք յետ կանգնեցնել ինձ իմ մտադրութիւնից: Թէև անմիտ բան է, բայց խոստացել եմ:

Պ. Ուլրիխ ցնցեց ուսերը:

— Այո, նախ կամ յետոյ մեկնելը լուրջ հարց է, բայց գլխաւորն այդ չէ: Էականը որոշուած է: Ո՞վ, ի՞նչը դրդեց քեզ կայացնել այդ որոշումը: Դուցէ նրա համար որ պապդ կանչեց. «Կորթը» — դու ուզում ես գնալ:

— Ո՛չ, նա մտածեց այնպէս, ինչպէս ես, ուրիշ ոչինչ:

— Դուցէ իմ բարեկամ Բաստիանի մերժումն է պատճառ:

—Ո՛հ էլ այդ: Եթէ նա դրական պատասխան տուած լինէր, եւ պէտք է նրան խոստովանուէի այն, ինչ ասացի ձեզ այս երեկոյ. եւ ոչ Գերմանիայում պիտի ապրեմ եւ ոչ էլ Ալգասում:

—Իսկ քրոջդ ամուսնութիւնը:

—Այո, այդ հարուածն իսկ բաւական էր, որ եւ փախչէի այստեղից: Ի՞նչ կը լինէր իմ կեանքը Ալշէյմում: Մտածել էք այդ մասին:

—Լսիր, Ժան. դու լքում ես այդպիսով իբրեւ ալգասեցիքո տեղը:

—Ո՛հ, եւ ոչինչ չեմ կարող անել Ալգասի համար:

Եւ չեմ կարող այլեւ գրաւել ալգասեցիների վստահութիւնը, իմ կասկածելի, վտանգաւոր հօր եւ մի պրուսիացու հետ ամուսնացած քրոջ պատճառով:

—Պիտի ասեն, որ դու դասալիք եղար:

—Թող այդ գան ինձ ասեն, երբ եւ ծառայելիս լինեմ ֆրանսիական բանակում:

—Իսկ քո մայրը, միթէ դու նրան պիտի թողնես այստեղ, մենակ...

—Դա է գլխաւոր առարկութիւնը, այ, հէնց այդ: Եւ ինքս մտածեցի դրա մասին... Մայրս չի կարող պահանջել, սակայն, որ իմ կեանքն էլ գոհուած ու դատարկ անցնի ինչպէս իրանը... Սկզբում դուցէ ինձ դատապարտի, բայց յետոյ անկասկած նա կը գովի իմ վարժունքը, որովհետեւ ես ազատուած կը լինեմ այն անտանելի լծից, որ ծանրացել է իր վրայ... Այո, նա ինձ կը ների: Եւ յետոյ...

Ժան ցոյց տուեց ժանիքաւոր եւ կանաչ վօժերը:

—Եւ յետոյ կայ թանկագին Ֆրանսիան, ինչպէս դուք էք ասում: Նա է որ ինձ ձգում է: Նա է որ իմ սրտում խօսեց առաջինը:

—Երեխայ, բացադանչեց պ. Ուլրիխ:

Կանգնեց երիտասարդի առաջ, որ մնում էր նստած եւ ժպտում էր համարեալ:

—Ո՛րքան գեղեցիկ պէտք է լինի մի ազգ, փոքրիկս, որ պէսզի երեսուն տարուց յետոյ նա զարթեցնէ այնպիսի սէրեր, ինչպէս քոնն է: Ո՛րտեղ է այն ժողովուրդը որի կարօտը բաշէին այդպէս: Օ՛հ, օրհնուած ցեղ, որ խօսում է դեռեւս քո սէջ...

Մի բոպէ կանգ առաւ:

—Եւ սակայն, պէտք է որ քեզ ասեմ, թէ դէպի ի՞նչ դժուարութիւններ եւ պատրանքներ գնում ես: Դա իմ պարտականութիւնն է Ժան, իմ Ժան, երբ դու սահմանն անցնես եւ ֆրան-

սխացիութեան իրաւանքդ պահանջես, ըստ օրինի, և մի տարուայ զինուորական ծառայութիւնդ կատարես, ի՞նչ պիտի անես այնուհետև:

— Ես միշտ կարող եմ իմ հացը շահել:

— Այդքան էլ վստահ մի լինի: Մի կարծի, որ Ֆրանսիացիները գրկաբաց պիտի ընդունեն քեզ, որովհետև դու ալգասեցի ես... Նրանք գուցէ մեզ մոռացել են աւելի, քան մենք նրանց... Յամենայն դէպս, նրանք նման են այն մարդկանց, որոնք մի շատ հին պարտք ունեն. չկամութեամբ և ուշ են վճարում... Չկարծես որ քեզ կ'օգնեն Ֆրանսիայում աւելի քան մի ուրիշին:

Ժան նրան ընդհատեց.

— Յամենայն դէպս ես վճռել եմ: Էլ չխօսենք դրա մասին, խնդրում եմ:

Այն ժամանակ, Ուլրիխ մօրեղբայրը, որ շոյում էր իր մոխրագոյն ու սրածայր մօրուքը, որպէս թէ այնտեղից բղիւնցնելու համար խօսքերը, որոնք տրտունջ էին արտայայտում թանկագին երկրի դէմ, լռեց, երկար դիտեց իր քրոջ որդուն, մեղսակցութեան մի ժպիտով, որը մեծանում էր և ծաղկում: Եւ վերջ ի վերջոյ ասաց.

— Այժմ որ իմ պարտականութիւնը կատարել եմ, և անկարող եմ եղել քեզ համոզել, իրաւունք ունեմ քեզ խոստովանելու, Ժան, որ ես էլ երբեմն ունեցել եմ այդ միտքը... Ի՞նչ կ'ասէիր, եթէ ես էլ քեզ հետ գայի Ֆրանսիա:

— Դձուր:

— Ո՛չ անմիջապէս: Իմ այստեղ ապրելու նպատակը այն չէր, որ տեսնեմ, թէ ի՞նչպէս ես մեծանում դու և ի՞նչպէս շարունակում ալգասական աւանդութիւնը. ո՛չ, իմ կեանքի նպատակը բոլորովին այլ էր... Բայց նա խորտակում է անս... Գիտես, թէ իմ գալը լաւագոյն միջոցներից մէկն է, որ դու վատ ընդունելութիւն չգտնես Ֆրանսիայում...

Ժան այնքան բուռն կերպով յուզուեց այդ յայտնութիւնից, որ անմիջապէս ասաց.

— Լսեցէք, Ուլրիխ մօրեղբայր. ես ձեզ կարիք ունեմ ո՛չ թէ ապագային, այլ մի քանի օրից... Ես ձեզ յայտնեցի իմ որոշումը, հէնց նրա համար, որ դուք ինձ օգնէք...

Վեր կացաւ, գնաց դէպի գրադարանը, որը գտնուում էր դրան կողքին, վերցրեց մի սպայախմբի (etat-major) բարտէզ, և, բաց անելով, վերադարձաւ բազմոցի մօտ:

— Նստէք ինձ մօտ, մօրեղբայր, և մի քիչ աշխարհագրութեամբ զբաղուենք:

Ծնկների վրայ փռեց Ստորին-Ալզասի սահմանագծի քարտեզը:

— Ես վճռել եմ փախչել այստեղ, ասաց: Պէտք է փոքր ինչ ուսմնասիրենք:

Ուլլրիխ մտերղբայրը գլուխը թափ տուեց իբրև հաւանութեան նշան, և շահագրգռուեց այնպէս, կարծես որսորդութեան կամ մօտալուտ պատերազմի մի պլանի մասին լինէր խօսքը:

— Լաւ տեղ է, բացազանչեց, Մեծ-Ալբրիւրի կողքից: Ինձ թւում է, արդարեւ, որ Ստրազբուրգից ամենամօտ սահմանագլուխը այդ կէտն է... Բայց ի՞նչ տուեց քեզ այդ տեղեկութիւնը:

— Ֆրանսուան, Ռամշպախէրների միջնակ որդին:

— Այդ կէտից ապահով է: Երկաթուղի պիտի նստնայ:

— Այո՛,

— Մինչև որտե՞ղ:

— Երեւի մինչև Շիրմէկ:

— Ո՛չ, դա Հափազանց մօտ է սահմանագլխից և Հափազանց կարեւոր կայարան է: Եթէ քո տեղը լինէի նախորդ կայարանը Ռուս-Նէրս-բախ կ'իջնէի:

— Լաւ: Այնտեղից կը նստեմ կառքը, որ նախապէս կը վարձեմ... կը գնամ մինչև Մեծ-Ալբրիւր, կը նետուիմ անտառ:

— Ուզում ես ասել, կը նետուի՞րք:

— Ի՞նչ, մի՞թէ դուք էլ էք գալիս:

Երկու մարդիկը միմեանց նայեցին, միմիանցով հպարտացած:

— Իհարկէ, շարունակեց պ. Ուլլրիխ, զարմանալու ոչինչ չկայ: Դա իմ արհեստն է: Ուղեորութեան անձանձիր սիրահար, ես ուզում եմ գնալ ծանօթանալ այդ տեղերի հետ, յետոյ, երբ անտառը ուսումնասիրեմ այնպէս, որ կարող լինեմ նոյն իսկ գիշերով իմ ճանապարհը գտնել, այն ժամանակ ես քեզ կ'առնեմ, թէ ծրագիրը լաւ է թէ ոչ, և որոշուած ժամին, դու ինձ կը գտնես քո կողքին պատրաստ: Բայց չմոռանաս զրօսաշրջիկի, տուրիստի ձեռով հագնուելու. կակուղ գլխարկ, սրնքակալներ, և մանաւանդ բոռի նշոյլ անգամ չունենաս:

— Անկասկած:

Պ. Ուլլրիխ նորից հայեացքը պցեց պատուական ժանի վրայ, որը առ յաւէտ թողնում էր Օրերլէների, Բինլէյների, բոլոր նախնիքների հողը:

— Յամենայն դէպս, ասան, հակառակ վտանգի հաճոյքին, քո փախուստը տխուր է, այնպէս չէ՞:

— Էհ, ասաց ժան, ջանալով ծիծաղել, կը գնամ կը տեսնեմ Հռենոսը այնտեղից, ուր նա ազատ է հոսում:

Պ. Ուլրիխ նրան համբուրեց:

— Արիութիւն, փոքրիկ, շուտով դարձեալ կը խօսակցենք: Ուշադրութիւն արա որ ծրագիրդ գաղտնի պահես: Ո՞վ է այն միւսը, որին ուզում ես յայտնել քո մտադրութիւնը:

— Պ. Բաստիանը.

Մօրեղբայրը հաւանութիւն տուեց, և մինչև շէմքը առաջանալուց յետոյ, մատնացոյց անելով հարեան սենեակը, որտեղից այլևս դուրս չէր գալիս պ. Ֆիլիպ Օրերլէն.

— Այդ զժախտը: Եւ մտածել, որ նա, կէս-մարդ լինելով հանդերձ, շատ աւելի նախանձախնդիր է իր պատուին, քան մնացեալ բոլորը միասին վերցրած: Յտեսութիւն, իմ ժամ:

Մի քանի ժամ յետոյ, սովորութեան համաձայն ժան գնաց գործարանի գրասենեակը: Բայց այնքան ցրուած էր ուշադրութիւնը, որ անկարող եղաւ ոչ մի աշխատանք կատարել:

Նրա հետ խօսելու կարիք ունեցող ծառայողները նշմարած լինելով նրա մտացիրութիւնը, գերմանացի վերակացունէրից մէկը ասաց իր հայրենակից գրագիրներին.

— Գերմանական հեծելազօրքը աւերի է մատնում կարծես այս կողմերը. մեր պատրոնը համարեա զժուածի կերպարանք է ստացել:

Միևնոյն հայրենասիրական զգացումը նրանց բոլորին ծիծաղել տուեց, անշշուկ:

Յետոյ ընթրիքի ժամը հնչեց: Ժան սարսափում էր մօրն ու Լիւսիէնի ներկայութիւնից: Այս վերջինը, սեղանատուն մտնելու ընթացքին բռնեց և պահեց եղբորը, և կիսաստուերի մէջ, գորովագին համբուրեց նրան իր կրծքի վրայ սեղմելով: Ինչպէս բոլոր նշանածները, Լիւսիէն մի քիչ համբուրում էր միւսին գուցէ անգիտակցաբար: Մակայն մտածումը ժանի վրայ կենտրոնացած էր: Լիւսիէն մրմնջեց.

— Ես նրա հետ խօսակցեցի երկարօրէն, Օրերնէում: Նա ինձ շատ դուր է գալիս, որովհետեւ գոռոզ է ինձ նման: Նա ինձ խոստացաւ քեզ պաշտպանել զօրաբանակում: Բայց նրա մասին ընթրելու ժամանակ չխօսեմք. չլինի: Աւելի յարմար է լռել: Մայրիկի վարմունքը հիանալի էր: Խեղճ կիներ ինձ յուզեց: Նրա համբերութիւնը սպառուել է... իմ ժան, ես հարկադրուած եղայ նրան յայտնել քո գաղտնիքը, և նրան ասացի որ դու չես հեռանայ Ալզասից, որովհետեւ սիրում ես Օդելին: Ինձ կը ներքս, չէ:

Լիւսիէն թէն անցկացրեց եղբօր թեւին, և նախասենեակից դուրս գալով մտաւ սեղանատուն, ուր նստել էին արդէն պ. և տիկին Օրերլէ, լուռ ու մունջ:

— Ի՞նչ է, սիրելի՛ եղբայր, այս տան մէջ ուրիշների վշտովն է գնւում ամեն ուրախութիւն: Տես. միայն ես եմ բաղ-դաւոր:

Ընթրիքը շատ կարճ տևեց: Պ. Օրերլէ խկոյն իր աղջը-կան տարաւ գնդամուղի սրահը, նրան հարց ու փորձ անելու համար: Մայրը մի քանի բոպէ էլ մնաց սեղանի առաջ, իր որդու մօտ, որի հետ այժմ մենակ էր: Որպէս մի քոյ՝ նրա դեմքի վրայից վար ընկաւ դժգոհութեան արտայայտութիւնը: Մայրը երեսը շուռ տուեց դէպի որդին, հիացաւ նրանով, ժպտաց նրան, և սրտակցութեան յուզիչ տոնով ասաց.

— Ի՞նչ թանկազին զաւակս, ես էլ չեմ կարող դիմանալ իմ ցաւին: Ես ջախջախուած եմ և պետք է որ ամեն բանից ձեռք քաշեմ: Բայց ես ուզում եմ քեզ խոստովանել, որ իմ տա-ռապանքի մէջ մի միակ ուրախութիւն զգացի: Երեւակայիւր, որ մինչև վերջին օրերս ես կարծում էի, և հաստատապէս, որ դու մեզ պիտի թողնես...

Ժան ուժգնութեամբ ցնցուեց:

— Օ՛, այժմ հանգստացել եմ, մի՛ վրդովուիր... Քոյրդ ինձ ասաց զաղտնի կերպով... որ, մի օր, մի փոքրիկ ալգաստեհու հարս պիտի բերեմ... Օ՛, չեա կարող երեւակայել թէ որքան բաղդաւոր պիտի զգամ ինձ այդ օրը... Իհարկէ, շատ լաւ եմ հասկանում, որ դու չէիր կարող ինձ հաղորդել քո գաղտնիքը, միմիանց յաջորդող այսքան վրդովեցուցիչ դէպքերի ընթացքում... Եւ յետոյ այդ բանը նոր է, այնպէս չէ՛: Չեմ տեսնում իմ Ժան, որ այս բոպէիս քեզանից ոչինչ չեմ հարցնում և որ կատարելապէս հանգիստ եմ քո մասին... Անշուփ սիրում եմ քեզ:

Նա էլ համբուրեց Ժանին. նա էլ սեղմեց Ժանին իր կրծքի վրայ: Բայց նրա միակ ուրախութիւնը, մխիթարութիւնը այդ էր. նա յիշում էր Ժանին օրօրոցում, նրա համար անցկացրած օրերն ու գիշերները, կրած մտատանջութիւնները, ձեռք առած կանխազգուշութիւնները, արած աղօթքները, նրա համար ունեցած երազները, և մտածում էր. «Այդ բոլորը դեռ ոչինչ է, բաղդատմամբ այն ամենին, որ կը ցանկանայի անել միշտ նրա համար:»

Երբ տիկին Օրերլէ հեռացաւ, Ժան քիչ յետոյ լսեց, որ պապի սենեակի դուռը ճոճաց և մայրը, ըստ իր սնխախտ սովորութեան, որ բարի գիշեր մաղթեց անկարին: Ժան այն ժամանակ վեր կացաւ և դուրս եկաւ սեղանատնից: Նա դաշ-Յունուր, 1906.

տերով գնաց մինչև այն ծառերի շարքը, որ շրջապատում էին Բաստիանների տունը, յետոյ մտաւ պարկը և ծածկուած այնտեղ, որոշ ժամանակ սպասեց և դիտեց մեծ սրահի պատուհանի փեղկերից դուրս մաղուող լոյսը:

Ձայներ՝ խօսում էին հերթով: Թէպէտև նրանց հնչումը ճանաչում էր, բայց բռնեը որոշ չէր լսում: Ուշ ուշ, դանդաղ դանդաղ էին արտասանում խօսքերը. ժան հետեցրեց դրանից, որ նրանք տխուր էին: Փորձեց առաջ գնալ և վրձնապէս մտնել սրահ: Մտածում էր. «Այժմ, երբ վճուել եմ ապրել Ալգասից դուրս, այժմ երբ նրանք ինձ մերժել են հօրս բռնած դիրքի և Լիւսիէնի ամուսնութեան պատճառով, ես այլևս իրաւունք չունիմ հարց ու փորձի ենթարկել Օդիլին: Ես կը թողնեմ կը զնամ, առանց իմանալու, որ նա էլ տառապում է ինձ նման... Բայց միթէ չեմ կարող նրան տեսնել, իրանց տանը, վերջին անգամ, երբ նրանք երեքը միասին հաւաքուած խօսում են մտերմօրէն: Ես նրան չեմ գրի, ո՛չ էլ կ'աշխատեմ խօսել նրա հետ. բայց կը տեսնեմ նրան և ինձ հետ կը տանեմ նրանից մի վերջին յիշողութիւն, և նա կը գուշակի գուցէ, որ ես արժանի եմ զթուլթեան:»

Բայց այնուամենայնիւ նա վարանում էր: Այդ երեկոյեան նա իրան չափազանց դժբաղդ, չափազանց տկար էր գտնւում: Մինչև հոկտեմբերի 1-ը գուցէ մի ուրիշ օր կարող լինէր այցելելու: Մի քայլ էլ առաջացաւ դէպի պարտէզի կողմը: Ժան դարձեալ նայեց լոյսի բարակ ճառագայթին, որը ցոլում էր սրահից, ուր նստել էր Օդիլ: Եւ յետ դարձաւ:

XIV

Վերջին երեկոն

Հասել էր վերջին երեկոն: Ժան պէտք է Օրերնէից գիշերուայ գնացքը նստէր Ստրազբուրգ գնալու և հետեւալ առաւօտ ժամի եօթին, օրինական ժամին՝ Սէն-Նիկօլայի դօրանոցում լինելու համար: Ստրազբուրգի դերձակներից մէկին պատուիրած իր գլնուորական հագուստները—մի տարուայ կամաւոր գլնուորի սովորական հագուստները—ըսպասում էին նրան, կապոյա ու դեղին, ծալուած, դրուած երկու աթոռների վրայ. այն սենեակում, որ մի ամիս առաջ վարձել էր տիկին Օրերէ, Սէն-Նիկօլայ դօրանոցի դիմաց, Բալէյօր փողոցի մէջտեղերը:

Ընթրիքից յետոյ Ժան ասել էր իր մօր.

—Թողէք ինձ մի քիչ զբօսնեմ մենակ, որպէսզի մնաք բարով ասեմ Ալլէյմ գիւղին, որը երկար ժամանակ չպիտի կարողանամ տեսնել:

Տիկին Օրերլէ ժպտնացել էր: Պ. Ժողէֆ Օրերլէ պատասխանել էր,

—Մնաք բարով ասան և ինձ, որդեանկ, որովհետեւ վաղը, հոկտեմբերի 1-ին, մի պարտամուրհակ ունիմ վճարելու և դրա համար պէտք է գնամ զրասենեակ, աշխատեմ. մեկնելու ժամիդ ինձ չես դռնիւ այստեղ: Եւ յետոյ ես աւելորդ յուզմունքներ, փղծկումներ չեմ սիրում: Ճմշտ է, երկու ամսից առաջ հեշտութեամբ արձակուրդ չես կարող ստանալ, բայց ոչինչ, այնուհետեւ աւելի մեծ բաւականութիւն կը պատճառէ քեզ քո արձակուրդը, երբ դուն վերադառնաս: Դէ, համբուրի՛ր ինձ, ուրեմն:

Ժան համբուրել էր նրան իր կարծածից աւելի բուռն խանդաղատանքով և դուրս էր եկել տանից Լիւսիէնի «ցտեպուլին» բացադանշութիւնից յետոյ:

Գիշերը տարօրինակ կերպով խոնաւ էր: Ո՛չ մի ամպ: Լուսնի մահիկը. բիւրաւոր աստղեր: Բայց երկնքի և երկրի մէջտեղ փռուած էր մառախուղի մի քօղ, որը չէր սքօղում լոյսը, այլ նրան ցրում էր այնպիսի ձևով, որ չկար մի առարկայ, որ գտնուէր իսկապէս ստուերի մէջ, ոչ է՛լ՝ փայլելիս լինէր: Մի սատափեայ մթնոլորտ պարփակում էր ամեն ինչ:

—Ո՛րքան քաղցր է իմ Ալլասը, մրմնջաց Ժան, երբ բաց արեց բանջարանոցի դուռը և ինքն իրան գտաւ գիւղի ետևում դաշտի առաջ, ուր քնում էր լուսնի պայծառութիւնը, տեղ-տեղ ծածկուած՝ մի խնձորենու կամ մի ընկուզենու կլոր ոտուերով: Մի անսահման թմբութիւն դուրս էր ժայթքում հողից, որը թրջել էին աշնան առաջին անձրեւները: Հերկի բուրմունքները խառնուում էին խոզանների հոտին, և իրանց ամբողջ փթթումին ու անուշահոտութեան հասած բուսականութեան բոյրին: Լեռը փչում դուրս էր տալիս մեղմիկ դէպի հովիտը իւր շոճիւնների քղմնաւորման փոշու, իր անանուխների, իր մահամեղձ ելակենիների և անցորդների ու հօտերի ոտի կոխան դարձած զանազան բոյսերի ծաղիկների բուրմուքը: Ժան շնչեց իր Ալլասի քաղցր հոտը և մտածեց. «Սա վերջին անգամն է: Այլևս երբէք, երբէք չեմ տեսնելու»:

Տանիքներից, որ ձգւում էին երիտասարդի հետևած ուղու ձախակողմը, ծուխ չէր բարձրանում: Նրանք, եկեղեցու շուրջը եղբայրաբար իրար միացած ձեռքերի տեսքն ունէին և նրանց իւրաքանչիւրի տակ Ժան կարող էր երևակայել մի ծանօթ

կամ բարեկամ դէմք։ Եւ այսպէս, քայլելիս, նա մի քիչ ժամանակ խորհնց։ Բայց հենց որ դաշտերի մէջտեղ նշմարեց ծառերի խոշոր ու գորշ պուրակը, ուր թագնուել էր պ. Քսավիէ Բաստիանի բնակարանը, ուրիշ ամեն մտածում ցրուեց։ Ագարակի գլուխը հասնելով՝ մտաւ կեռասենիների ծառուղին, դարձեալ քիչ խորհրդածեց ու կանգ առաւ սպիտակ վանդակապատի առաջ։ Ո՛չ որ չէր անցնում։ Եւ յետոյ, ի՞նչ փոյթ, եթէ նոյն իսկ անցնում էր։ Ժամն բաց արեց դուռը, սահնց ներս, մարդագետնի եզերքից քայլելով, ծառերի շուաքի տակից սողոսկելով հասաւ մեծ սրահի պատուհանի առաջ, որը լուսաւորուած էր, յետոյ տան շուրջը պտոյտ գործեց ու կանգ առաւ դրան մօտ, որ բացուում էր Ալէէյմ գիւղի հակառակ կողմի վրայ։

Մի ըստէ սպասեց, մտաւ գաւիթը և բաց արեց սրահի դուռը, ուր հաւաքուում էր ամեն գիշեր Բաստիան ընտանիքը։

Ի՞նչպէս ժամն երևակայել էր, երեքն էլ նստել էին լամբի շուրջը։ Հայրը լրագիր էր կարդում. երկու կնայք, նստած՝ մուգ սեղանի միւս կողմը, որի վրայ դարսուած էր ծալուած սպիտակեղէնի մի կոյտ, անձեռոցների ծայրին սկզբնատառեր էին ասեղնագործում։ Դուռը բացուել էր համարեա անշուշտ. միայն դռան ծերպերի շուրջը դրուած բամբակեայ ոլորները քսուել էին տախտակամածին։ Սակայն բնակարանի շրջակայքում և տան մէջ այնպիսի խոր լռութիւն էր տիրում, որ Բաստիան ընտանիքը շուտ տուեց գլուխը դէպի դուռը, աչքերը փոքրացրեց, տեսնելու համար թէ ով էր եկողը։

Մի ըստէ պ. Բաստիանն ու ժամը վարանմունքի մէջ թաղուեցին։ Ժամն իր հայեացքը գցեց նախ Օդիլի դէմքի վրայ։ Տեսաւ որ նա էլ՝ իր նման՝ տառապել էր և որ առաջինը, միակը՝ ճանաչեց ներս մտնողին, դժգունուեց, անձկութեամբ ձեռքը բարձրացաւ և շնչառութիւնը, հայեացքը կանգ առան։

Օդիլի ասեղնագործած սպիտակեղէնը ձեռքից սահեց վայր ընկաւ և նա ամենաթեթեւ շարժումն անգամ չգործեց վեր առնելու համար նրան։

Եւ գուցէ այդ նշանից պ. Բաստիան ճանաչեց, թէ ով էր այցելուն։ Իսկոյն յուզմունքը գրաւեց նրան։

— Ի՞նչպէս, հարցրեց քաղցրութեամբ, դու ես ժամ։ Ո՛չ որ քեզ չառաջնորդեց... Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել։

Լրագիրը դանդաղօրէն դրեց սեղանի վրայ, անընդհատ սենեակի մթութեան մէջ՝ դիտելով երիտասարդին, որ դռնից երկու քայլ հեռու կանգնել էր միևնոյն տեղում։

— Եկել եմ մնաք բարովի, ասաց ժամ։

Բայց ձայնը այնքան այլայլուած էր, որ պ. Բաստիան

հասկացաւ, որ ինչ որ անծանօթ և ողբերգական բան մտել էր իր տունը: Վեր կացաւ, ասելով.

— Հնա, իրաւ, վաղը հոկտեմբերի 1-ն է... Զօրանոց ես մանկելու, իմ խեղճ բարեկամս... Երևի ինձ ասելու բան ունես:

Պ. Բաստիան շտապով դիմել և երկարել էր ձեռքը երիտասարդին: Ժան սենեակի ամենամութ անկիւնը տանելով՝ պատասխանել էր նրան շատ ցածր, աչքերը նրա աչքերին յառած: Տիկին Բաստիան նայում էր մութի մէջ, ուր երկուսը անորոշ մի խուժը էին կազմում:

— Ես մեկնում եմ, մրմնջաց ժան, և երբէք չեմ վերադառնալու, պարոն Բաստիան: Դրա համար է որ ես ինձ թոյլ տուեցի դալ այստեղ:

Ժան զգաց որ ալգասցու կարծր ձեռքը դողում էր: Տեղի ունեցաւ մի գաղտնի, արագ խօսակցութիւն, որի ընթացքում երկու կանայք, անհանգիստ, վեր էին կենում իրանց աթոռներից և ձեռները սեղանի վրայ յենած՝ ծուռում էին դէպի առաջ:

— Ի՞նչ ես ուզում ասել: Մի տարուց չէ՞ս վերադառնամ:

— Ո՛չ, պիտի զինուորագուեմ, որովհետև խոստացել եմ: Բայց իսկոյն զինուորութիւնը պիտի թողնեմ:

— Պիտի թողնե՞ս, երբ:

— Վաղը չէ, միւս օր:

— Ո՞ւր ես գնալու:

— Ֆրանսա:

— Մշտապէ՞ս:

— Այո:

Մի բոպէ ձեռունի ալգասեցին դէպի ետ դարձաւ.

— Դէ, խօսեցէք դուք, կիներմատներ, խօսեցէք, դրադուեցէք. մենք փոքր ինչ գործ ունենք:

Կանայք ըստ ըստ վեր կացան իրանց տեղից: Պ. Բաստիան շնչահատ՝ կարծես վազած լինէր.

— Զգոյշ կաց քո անեղիքի մասին... Խոհեմ եղի՛ր... Զը բռնուե՛ս...

Նա երկու ձեռքերը դրեց ժանի ուսերի վրայ.

— Իսկ ես, իհարկէ, կը մնամ այստեղ: Ի՞նչ արած, ես էլ այս ձեռով եմ սիրում Ալգասը: Սրանից լաւ ձև չկայ: Այստեղ ապրել, եմ այստեղ էլ պիտի մեռնեմ: Բո բանը ուրիշ է, զաւակս... Ես հասկանում եմ քո դրութիւնը... Կանանց հչինջ չյայտնես այդ մասին: Դա շատ ծանր փորձ է... Զերոնք տեղեկութիւն ունե՞ն:

Ո՛չ:

—Ոչինչ մի ասա, գաղտնի պահիր:

Աւելացրեց շատ կամաց.

—Երևի փափագեցար Օդիլին տեսնել. դրա համար քեզ չեմ կշտամբի, որովհետև դուք էլ միմեանց երբեք չէք տեսնելու...

Ժան գլխի մի շարժում արեց որ նշանակում էր. «Այո, ես ցանկացայ նրան տեսնել»:

—Դիտիր նրան մի բոպէ և յետոյ հեռացիր... Կանգնիր այդտեղ և նայիր իմ ուսի վրայից...

Եւ պ. Բաստիանի ուսի վրայից ժան տեսաւ, որ Օդիլի աչքերը՝ նախ խռովուած՝ սարսափահար արտայայտութիւն ստացան: Օդիլ չամաչեց դիմադրաւելու ժանի հայնացքը: Նա հետաքրքրուած էր միմիայն իր հօր և միչև տեղի ունեցող խօսակցութեամբ, այն խորհրդով, ուր զգում էր որ խառնուած է ինքը, և իր դէմքը մատնում էր իր երիտասարդութեան գերագոյն տանջումները:

«Ի՞նչ են ասում միմիանց: Արդեօք վաժա հետեանք է ունենալու, թէ լաւ Ո՛չ, լաւ չէ, որովհետև միասին չեն դառնում դէպի ինձ»:

Մայրը էլ աւելի դժգոյն էր քան աղջիկը:

—Մնաս բարով, դաւակն, ասաց պ. Բաստիան ցածր ձայնով: Քեզ շատ էի սիրում, հաւատացած եղիր... Ես ուրիշ կերպ չէի կարող անել... Բայց ես քեզ յարգում, եւ ես քեզ միշտ կը յիշեմ...

Փղձկած՝ ծերունի ալգասեցին սեղմեց ժանի ձեռքը լուռ, և բաց թողեց. Ժան արագ կտրեց անցաւ այն փոքրիկ տարածութիւնը, որ բաժանում էր նրան դռնից... Նա դողդողում էր և շփոթուած... Մի վերջին անգամ շուռ տուեց երեսը. ուրեմն հեռանում էր... մի բոպէից աներևութացած պիտի լինէր... էլ չպիտի վերադարձար Ալշէյմ:

—Ցտեսութիւն, տիկին, ասաց:

Կամեցաւ ցտեսութիւն ասել և Օդիլի, բայց հեծեծանքը արգելեց նրան խօսելուց: Ժան նետուեց դէպի խաւար նորանցքը... լսուեց նրա արագ քայլերի աղմուկը...

—Այս ինչ է նշանակում, հարցրեց տիկին Բաստիան. Քոսովիէ դու մի բան թագցնում ես մեղանից:

Ծերունի ալգասեցին հեծեծում էր. Տիկին Բաստիան խօսելու հասկացաւ և իր բոլոր կանխակալ կարծիքները չքացան:

—Օդիլ, բացազանչեց, վազիր նրան մնաս բարով ասա:

Օդիլ թռաւ, անցաւ սրահով, հասաւ ժանի ետեից տանք անկիւնի մօտ:

—Պաղատում եմ, ասաց, ինչո՞ւ այդքան դժբաղդ էք:

Ժան շրջեց դէմքը հաստատապէս վճռած՝ բնաւ չխօսել և պահել իր երգումը: Օգիլ բոլորովին մօտեցել էր իրան: Ժան բաց արեց թևերը: Օգիլ նետուեց նրա գիրկը:

— Ահ, Աստուած իմ, գոչեց բարձր ձայնով. դուք հեռանում էք, դդում եմ հեռանում էք:

Ժան գործովագին հաժքուրեց նրա մազերը առ յաւէտ, և փախաւ շուռ գալով տան անկիւնը:

XV

Բանակ մոտերը

Ժամը եօթից քառորդ պակաս Ժան Օբերլէ՝ քաղաքացիական շորերով՝ գնում էր նախկին Ֆրանսիական Սէն-Նիկոլայ զօրանոցի կղմինտրաշէն անոռներին երկարութեամբ, որը գերմանացիները կոչում են այսօր «Նիկոլաուս Կադէրնէ»:

Նա հասաւ զօրանոցի վանդակապատ դրան առաջ, բարեկց պահակազօրքի գլխաւոր ենթասպային, մի քանի բառ փոխանակեց նրա հետ, մօտեցաւ երկոտասանեակ երիտասարդներից բազկացած մի խմբի, բոլորն էլ մի տարուայ կամաւոր զինուորներ, որոնք կանգնել էին բակի միւս ծայրում, շէնքի ետայարի ընդարձակ ճակատի խոշոր ժամացոյցի տակ, բաց կապոյտ ներկուած պատերի առաջ: Հեծելազօրքի զինուորներ՝ երկնագոյն կապոյտ թիկնոցով, սև տափատով, տափակ գդակով՝ անցուդարձ էին անում ընդարձակ, փոշոտ, միապաղաղ գետնի վրայ ամեն ուղղութեամբ: Հեծեալ մի ջոկատ, նիզակ ուսին, ձախակողմում, մի գոմի երկարութեան շարուած՝ ճանապարհ ընկնելու համար սպասում էր սպայի հրամանին:

— Herr Sergeant, ասաց Ժան, մօտենալով յաւանդոտ ու ամբարտաւան երեւոյթով բռնազրօսիկ արդ ու զարդով և ուսմիկ դէմքով մի ենթասպայի, որ սպասում էր նրան կամաւորների խմբի գլուխը կանգնած, — այս տարուայ կամաւորներից մէկն էլ ես եմ:

Ենթասպան, որ շատ երկար սև բեխեր ունէր, որոնց անգաղար քաշում և վեր էր բարձրացնում, պահանջեց Ժանի անունն ու ազգանունը, և իր ձեռքին բռնած ցուցակի վրայ կայրեց միւս անունների և ազգանունների շարքում:

Միաժամանակ, իր համազգեստում խրոխտ դիրք առած և ներքնապէս վախեցած իր ընդունած կամաւորների ենթադրեալ հարստութիւնից, փափաղելով նրանց դուր գալ և աշխատելով իր այդ ձգտումը ծածուկ պահել, նա հայեացքով ոտից

մինչև գլուխ չափչոււմ էր իր հետ խօսող կամաւորին, որպէս թէ փնտռելիս լինէր նրա մարմնական թերութիւնները, արատը, ձեռքի կամ երեսի ելունդները, մի խօսքով այն՝ ինչ կարող էր ծիծաղելի թուալ ենթասպայի աչքին, ալղասցի այդ քաղաքացու վրայ.

Երբ քննութիւնը վերջացրեց, բացագանչեց:

— Կանգնեցէք միւսների շարքում:

Միւսները՝ մեծ մասով բաղկացած էին գերմանացիներէր, որոնք պէտք է եկած լինէին, ինչպէս ցոյց էր տալիս նրանց տիպերի բազմազանութիւնը, կայսրութեան ամեն կողմից: Համազգեստը հագնելիս՝ աշխատել էին լաւ տուալէտ անել, որպէսզի իրանց կամաւոր ընկերներին և զօրանոցի զինուորներին ցոյց տան թէ իրանք, քաղաքացիական կեանքում, հարուստ գերդաստանի զաւակներ են: Փայլփլուն կօշիկներ, թանգ կաշուց դեղին կամ կարմիր ձեռնոցներ էին կրում, իրանց փողկապները կապել էին շատ շիկ կերպով և մեծարժէք գնդասեղներ էին մխել նրանց վրայ:

Նրանցից իւրաքանչիւրը ինքն իրան ներկայացնում էր իր ապագայ ընկերներին՝ ասելով. «Թոյլ տուէք ներկայացնել ինձ ձեզ. իմ ազգանունն է Ֆիւլքախ. իմ ազգանունն է Բլօսման» ժան դրանց և ոչ մէկի հետ ծանօթ էր: Բաւականանում էր միայն խոնարհութիւն անելով, առանց իր ազգանունը յայտնելու: Ինչ կարիք կար ծանօթանալու, քանի որ միայն այդ օրը պէտք է նրանց ընկերը լինէր:

Յմբի ձախակողմում կանգնեց. միտքը թռչում էր հեռու, Սէն-Նիկոլայ զօրանոցից շատ հեռու. իսկ սրա շուրջը միենոյն հարցումը ման էր գալիս շրթունքից շրթունք. «Ո՞վ է սա: Ալղասեցի՞ է, չէ?» Ու շատերը հեգնութեամբ ժպտացին, ոմանք միմիանից զգուշացրին նրանց ցեղական խուլ տտելութեամբ վառուած, մի քանիսը ամբարտաւանութեամբ խրոխտացին նրա վրայ, ուրիշներ շեշտակի սկսեցին բեռել իրանց կապոյտ ու խստահայեաց աչքերը նորեկի վրայ:

Երկու կամաւորներ էլ եկան: Ժամը հնչեց, և ենթասպան տասնհինգ կամաւորների գլուխն անցած՝ մտաւ մեծ դռնից, որ տանում էր զօրանոցի ճիշտ կհնարոնը և բարձրացաւ երկրորդ յարկում մի սրահ, ուր պիտք է տեղի ունենար բժշկական քննութիւնը: Ժամի ութին կամաւորները դարձեալ հաւաքուեցին, բայց ոչ ըստ իրանց քմահաճոյքի, այլ երկու կարգի վրայ շարուած և սպայի խիստ հակողութեան տակ: Սպասում էին գնդապետին: Ժանի ձախ կողքին կանգնել էր Յրիբուրգի ինդուստրիէլներից մէկի որդին, բարձրահասակ, առ-

անց բխ ու մօրուքի, կենդանի աչքերով և խարտեաշ երեխայի այտերով, որոնք կրում էին երկու սպիներ, մինը՝ քթի մօտ, միւսը աջ աչքի մօտ. ուսանողական մենամարտների յիշատակներ: Տեսնելով որ Ժան Օրերլէն շատ մտածկոտ և լուռ է, նա կարծեց, որ վախվստւած է այդ նոր միջավայրից և իսկոյն առաջարկեց նրան, իբրեւ առաջնորդ, իր ծառայութիւնը:

Մինչդեռ ալգասեցին՝ ձեռքերը ետև շղթայած, դժգոյն և առողջ դէմքը դէպի վանդակադուռը ուղղած՝ հոկտեմբերեան արեգակի մէջ դիտում էր Ստրազբուրգի ազգաբնակչութիւնը, որ անցուղարձ էր անում փողոցներով, իր հարեանը աշխատում էր նրա ուշադրութիւնը բեռել զօրանոցի կեանքի մանրամասնութիւնների և անձնաւորութիւնների վրայ:

Դուք սխալւում էք ինձ պէս չանելով. ես հարկաւոր եղած միջոցները գործ դրի, որպէսզի ծանօթանամ մի քանի սպանների հետ: Ես նպատակին հասայ: Ա՛յ, տեսէք այն wachtmister-ին, որ ելնում է Խոռատներից, դա Շտիւրէլն է, լաւ խլամոզ, լաւ ուտող, բարի մարդ է: Նա որ մեզ դիտում է բակի միւս ծայրից, կարմրաւուն, փոքրիկ բեխաւորը, տեսնում էք, կոչւում է Դոտֆրիդ Համմ, մի զգուշի տիպ... Ծանաչում էք նրան:

— Այո՛:

— Ուշադրութիւն, հրամայեց սպան: Ուղիղ կացէք: Իսկ ինքը տասը քայլ առաջ գնաց շտապով և գլուխը բարձր, երկու թևերը ձգած մարմնի երկարութեան, ձախ ափով բռնած սուրը՝ կոթից ներքեւ, կանգ առաւ:

Նա նշմարել էր մի սպայի, որ փաթաթուած էր մոխրագոյն վերարկուի մէջ, առաջանում էր հանդարտ, հանդարտ. նրա երեւոյթ բաւական եղաւ, որ քսանի չափ հուսաւորներ, որոնք արեգակի տակ, պատերի երկայնքին թափառում էին, ծակէ ծակ մտնեն: Գնդապետը կանգ առաւ առաջին շարքի առաջ, որ կազմուած էր երիտասարդներից, գերմանական բանակի պահեստազօրքի յոյսից: Դա մի արիւնային և արագաշարժ մարդ էր, վարժ ձիավար, շատ կորովի, նիհար սրունքներով, լայն իրանով, համարեա սև մազերով և այնպիսի աչքերով՝ որոնք առհասարակ սարսափ էին տարածում ծառայութեան ժամանակ:

— Պարոն գնդապետ, ասաց սպան, ահա մի տարուայ կամաւորները:

Գնդապետը՝ իսկոյն կիտեց յօնքերը, և ասաց, յաջորդաբար միևնոյն խստութեամբ նայելով իւրաքանչիւր կամաւորի.

— Դուք առանձնաշնորհեալներ էք: Շնորհիւ ձեր ստացած

կրթութեան միայն մի տարի պիտի կատարէք ձեր զինուորական ծառայութիւնը: Ապացուցէք, որ արժանի էք այդ շնորհին: Միւս զինուորներին օրինակ հանդիսացէք: Մտածեցէք, որ ապագայում նրանց պետերն էք դառնալու: Եւ, մանաւանդ, չլինէ՛ թէ որևէ զանցառութիւն գործէք զինուորական կարգապահութեան վերաբերմամբ: Համազգեստի տակ, ոչ մի քմահաճոյք: Ո՛չ մի բռնի քաղաքացիական շորերով չտեսնեմ ձեզ: Ապա թէ ոչ խստիւ կը պատժեմ:

Պահանջեց կամաւորների ցուցակը: Երբ ժանը անունը կարդաց, մտքով զուգորդեց Փօն Փարնով տեղակալի անունն հետ և կանչեց.

— Կամաւոր Օրբըլէ:

Ժան շարքից դուրս եկաւ: Գնդապետը՝ առանց հայեացքի խստութիւնը մեղմացնելու, շեշտակի նայեց մի քանի վայրկեան երիտասարդի դէմքին: Մտածում էր որ սա եղբայրն էր այն Լիւսիէն Օրբըլէի, որին կնութեան խնդրելու թոյլ էր տուել տեղակալին:

— Լաւ, բացազանչեց:

Երկու մատները տարաւ գդակին և շուռ տուեց երեսը, ուռած՝ հիւսիսի քամուց, որ սկսեց իսկոյն փչել մոխրագոյն վերարկուի բացուածքից ներս:

Հազիւ անհետացել էր երբ մի սպայ, շատ գեղեցիկ տղամարդ, զինուորական և աշխարհիկ կատարեալ վայելչութեամբ, որ հռենոսեան հուսարների ադիւտանտ-մայօրի պաշտօնն էր վարում, եկաւ կանգնեց կամաւորների խմբի առաջ և կարդաց մի հրամանագիր, որ իւրաքանչիւր կամաւորի ոտ գնդում և ոտ բաժնում ծառայելն էր մատնանիշ անում: Ժան դտնուում էր երրորդ գնդի երկրորդ բաժնում:

— Բաղդ չունիս, մըմուաց իր հարեանը. դա Գօտֆրիդ Համմի գունդն է:

Այդ բոլորից սկսած՝ տասնեօնգ կամաւորները իսկապէս մտել էին զինուորական ծառայութեան մէջ, նրանք գրուել էին իրանց տեղը այդ կարգաւորեալ բազմութեան մէջ, ունէին իրանց պատասխանատու պետերը, իրաւունքը՝ պահանջելու այսինչ մագազինից զինուորական շորեր և այսինչ ախոռից՝ մի ձի:

Ինչ որ կատարեցին նրանք անմիջապէս: Ժան և իր դուստրուածական ընկերը, Լայպլիգի գրավաճառներից մէկի որդին, բարձրացան զօրանոցի վերջին յարկը և մտան հագուստեղէնի մագազինը, որտեղից ստացան իրանց համազգեստը իր բոլոր պարագաներով և թողեցին իրանց մի քանի հագուստները:

հեծելագործի վերարկունները և մի մի զոյգ կօշիկ, որ kammer-sergeant-ը ընդունեց իրա համար, իբրև բարի գալատեան նշան կամ յանձնելու համար բանակի ուրիշ ենթասպաներին:

Այդ գործողութիւնը երկար տևեց: Վերջացաւ միայն ժամի տասնից յետոյ: Այցելեցին այն սենեակը, ուր բնակուած էր սպայի առաջին ծառան, և ուր գտնուած էր սպիտակ փայտեայ այն փքրիկ դարակը, որի գործածութիւնը այնուհետև պէտք է ընդհանուր լինէր, և կամաւորի և՛ զինուորի համար. այցելեցին նոյնպէս ախոռի տասնապետին, որը պէտք է նրանց ցոյց տար իրանց յատկացուած ձին. այցելեցին և՛ վաշտի դերձակին. կէս օրից անցել էր, երբ ժան կարողացաւ փախչել զօրանոցից և շտապով ճաշել:

Կամաւորները, այդ առաջին օրուայ համար թոյլտուութիւն ունէին զօրանոց մտնել ժամի մէկին: Զիւնները դարմանելուց յետոյ միայն նրանք զօրանոցի բակում երևացին, բոլորը միասին—այդպէս էին պայմանաւորուած—իրանց շողողուն, նոր համազօգնասների մէջ փառահեղ, որոնց դիտում էին. հեծելագործները, մանաւանդ ենթասպանները, որոնք քննում էին նրանց անցնելու ժամանակ, նախանձով նրանց հագուստի կերպսի նրբութիւնն և ձևը, օձիքների վայելչութիւնն և թևերի զարդարանքները, ինչպէս և փայլուն կօշիկների շողքերը: Այդ երիտասարդներից միայն մէկը չէր զգում միւսների զգացած պատուասիրութեան հաճոյքը: Նա մտածում էր մի հեռագրի մասին, որ պէտք է գտնէր իր տնում, և որի պայմանաւորուած խօսքերը ծածանուեցին ժանի աչքերի առաջ ամբողջ կէս օրից յետոյ: Նա զրադուած էր միմիայն այդ հեռագրով: Ուրիշ մօրեղբօրից մեկնելու մասին ազդարարութիւն չստանալը մի կողմից, ջղայնութիւնը միւս կողմից, արգելք հանդիսացան երիտասարդին, որ այդ առաջին օրուայ սաստիկ յոգնութիւնն զգար: Նա աղատուել էր միայն երեկոյեան ժամի ութ և կէսին, ձիավարութեան, մարմնամարզութեան և ախոռի ծառայութեանց ծանր հոգսերից յետոյ: Կամաւորներից մի քանիսը այն աստիճան յոգնել, դադարել էին, որ նախամեծար համարեցին չընթրած պառկել:

Ժան նրանց օրինակին հետևեց, բայց բոլորովին ալպատ-ճառներից զրդուած: Անմիջապէս փեղարձաւ Բալէյիօր փողոցի իր բնակարանը.

Տան շէմքի վրայ էր, երբ դռնապանուհին կանգնեցրեց նրան.

—Պարոն Օրենրէ, ձեզ համար մի հեռագիր ստացուեց:

Ժան բարձրացաւ առաջին յարկը, վառեց իր մոմը, և

կարգաց առանց ստորագրութեան այն մի քանի բառերը, որոնց սպասում էր. «Ամեն ինչ լաւ է գնում»:

Դա նշանակում էր, որ ամեն ինչ պատրաստ էր հետևեալ օրուայ համար, որ պ. Ուլրիխը կատարել էր ինչ որ հարկաւոր էր: Ուրեմն այսուհետեւ բազդի անիւը շուտ էր եկել. Ժան պիտք է հեռանար զօրանոցից և Ալզասից հոկտեմբերի 2-ին, մի քանի ժամից յետոյ: Թէպէտեւ մի ըտպէ իսկ չվարանեց, բայց երիտասարդը մի բուռն յուզմունք զգաց այդ հեռագրի ընթերցումից, որը մի կերպ հրաւէր էր, կատարելու իր խոստումը: Վերջնական բաժանումների իրականութիւնը ուժգնապէս ազդեց իր մտքի վրայ, և, յոգնութիւնն էլ օժանդակելով, Ժան լաց եղաւ: Հագնուած նետուեց իր անկողնու վրայ: Գլուխը բարձի մէջ թաքցրած՝ նա սկսեց մտածել այն անձանց իւրաքանչիւրի վրայ, որոնք պետի շարուակէին ապրել Ալզասում, մինչդեռ ինքը յաւէտ աքսորում էր իրան ծննդավայրից: Նա երեակայում էր, թէ ինչ տեղի պիտի ունենար Ալշէյմում, երբ իր հեռանալու լուրն ստանային. ոմանք պիտի լաց լինէին. ուրիշներ պիտի զայրանային: Նա երեակայութեամբ տեսնում էր նրան՝ որին սիրում էր, Զատկի Նախատօնակի զուարթ Օդիլին, յուսահատութեան մատնուած, մեկնումի ժամին, ամեն ինչ գուշակելով և պաղատագին խնդրելով՝ մի պատասխան, որ նա չկարողացաւ ստանալ... Այդ բոլորը անհրաժեշտ էին, այդ բոլորը անգարմանելի էին: Սահում էին գիշերուայ ժամերը: Փողոցը լռել էր. Ժան ըմբռնեց, որ շուտով նա պէտք պիտի ունենայ բարոյական իր ամբողջ կորովին: Ջանալով իրանից հեռացնել իր կասկածերն ու մորմոքները, որ սպասում էին նրան, մտքում քսան անգամ իրար ետեից կրկնեց այն, ինչ որ ըրողած էր, երեք օր առաջ մօրեղբօր և իր միջև տեղի ունեցած մի տեսակցութեան ընթացքում, և որը պէտք է իրագործէր կէտ առ կէտ, այսօր:

Այո, այսօր, որովհետեւ աքաղաղները երգում էին արդէն հարեան բակերում: Անկարելի էր մեկնել առաւօտուայ գնացքերից մէկով: Կամաւորների ժամագրութիւնը՝ զօրանոցում, նշանակուած էր ժամի չորսին: Արդ, առաջին գնացքը մեկնում էր Ստրազբուրգից, Շիրմէկի ուղղութեամբ, ժամի հինգից քառասուն և ութ ըտպէ անցած. Ռուս—Հէրսբախ կարող էր հասնել միայն ժամի եօթին, և այդ գնացքը նստել, պարզապէս բռնուել կը նշանակէր: Կարելի չէր, արդարեւ, որ երեք ժամ անցնելուց յետոյ, մի կամաւոր ի բացակայութիւնը չնկատուէր, և այդ առիթով չիտթը չընկնէր զօրանոցում: Մօրեղբայր Ուլրիխը և Ժանը համաձայնուել էին այն բանի մասին, որ ա-

ռանց կասկածներ յարուցանելու սահմանազլիւց անցնելու հասարեա անսխալ միջոցն էր Ստրազըուրգից մեկնել կէս օրից տաս րոպէ անցած գնացքով, այսինք կամաւորներին ճաշի ժամին:

«Եւ այդ փորձը կատարել եմ, ասել էր պ. Ուլրիխ: Եւ վստահ եմ իմ թուանշանների վերաբերմամբ: Դու Ռուս—Հէրսրախ կը հասնես մէկ ժամ քսան և մէկ րոպէին, կառքը մեզ կը բարձրացնէ Շիրմէկ մի քառորդ ժամու: Կը դառնանք դէպի աջ և կէս ժամից կը լինենք Մեծ-Աղբիւր: Այդտեղ կը թողնենք մեր կառքը, և շնորհիւ քո և իմ սրունքների նման լաւ սրունքների, կը կարողանանք լինել Ֆրանսիայում ժամի երկուս քառասուն և հինգ րոպէին, կամ երկուս յիսունին: Այնուհետեւ ես քեզ կը թողնեմ և կը վերադառնամ:»

Գլխաւորն այն էր, որ կէս օրից տասն անցած գնացքը չփախցնէին. և այդ հեշտ էր, որովհետեւ կամաւորները առ հասարակ ժամի տասնեւեկից ազատ էին լինում:

Ժան վերջ իվերշոյ քնեց, բայց քիչ ժամանակուայ համար, ժամի չորսից առաջ նա մտնում էր Սէն-Նիկոլայի դօրանոցի վանդակապատ դռնից ներս:

Նրա ստացած փոքրիկ հանգիստը բաւական էր եղել նրանց վերադարձնելու իր կամքի ամբողջ ոյժը: Ինչպէս զօրեղ կամքի տէր եղողներից շատերը, ժան նախապէս վրդովուած էր զգում իրան: Բայց գործելու անհրաժեշտութեան առաջ, նորից գտնում էր իր անձի կատարեալ տիրապետութիւնը: Ձիերի դարմանումի, յետոյ հեծելավարժութեան, յետոյ զինուորական մարզանքի ամբողջ ընթացքում, որը տեւեց մինչև ժամի տասն և մէկը, նա միանգամայն խաղաղ էր: Նրա վարմունքի մէջ կար նոյնիսկ ինչ որ աւելի հետաքրքրութիւն, աւելի ջերմութիւն քան նախորդ օրը: Նրա ընկեր Սակսօնը նկատեց այդ և ասաց նրան. «Օհօ, արդէն վարժուեցինք, այնպէս չէ՞»: Ժան ժպտաց: Այժմ նա նայում էր այդ շէնքերին, այդ սպաներին, այդ զինուորներին, գերմանական ոյժի այդ գործիքին, միևնոյն եղանակով և միևնոյն զգացմունքով, որով նայում է ազատագրուած զպրոցականը իր կողմի պատերին, պրոֆեսօրներին և աշակերտներին: Նա իրան զգում էր արդէն այդ ամբողջութիւնից կտրուած. զննում էր, մասամբ դուրս հետաքրքրութեամբ, այն տեսարանները և դէպքերը, որոնց էլ ընաւ չէր տեսնելու:

Ժամի տասնեւեկին մօտ. բարոն գը Ֆարնովին նշմարեց, որ հուսարների մի շոգատի գրուխն անցած վերադառնում էր դօրանոց, հուսարներ, որոնք հոյակապ էին իրանց երիտասարդութեամբ, զինուորական առաջութեամբ և կարգապահ կամքով:

Զիւնները՝ ժամերի ընթացքում Նէրդօրֆի մարդարանում երկար արշաւած լինելու պատճառով, գալիս էին՝ մինչև լանջերը ցեխոտուած։ մարդիկը՝ պարտասած՝ դէպի առաջ էին ընկնում, և սպասում էին դադարի նշանին անիծելու համար օրուայ տարապարհակ աշխատանքը։ Ֆարնով՝ ամենևին չյոգնած՝ վարում էր իր նոյն գը բակի միջից միևնոյն հաճոյքով, որով պիտի բէր իր ձին, եթէ սրան հրաւիրած լինէին պատուական որսի և հէնց նոր մեկնէր դիպի իր ժամադրավայրը։ Ժան մտածեց. «Անա այն մարդը, որ իմ քրոջ ամուսինը պիտի լինի։ Մենք այլևս միմեանց չենք հանդիպելու երբէք։ Պատեւրազմի դէպքում նա իմ թշնամին պիտի լինի։» Նա երևակայեց նրան իբրև հեծելազօրքի ապագայ մի մեծ պետ, արշաւասոյր բշկիս իր ձին մի դաշտի փոշու մէջ, գոռալով, ծառացած իր առպանդակները վրայ, բերանն ու ռնգունքները բաց։ Ֆարնով չկասկածեց անգամ, թէ ինչ կարգի զուարճութիւններ էր մատակարարում երիտասարդ կամաւորին, որի վրայ հազիւ իր կապոյտ աչքերի մի ակնարկը գցեց։ Հեռացաւ դէպի բակի խորքը. իր մարդկանց գլուխն անցած։ Լսուեց մի կտրուկ հրաման, միմիանց բաղխող զէնքերի շառաչը, և յետոյ էլ ոչինչ։ Մարդանքը՝ մարդիչ սպայի փութաշանութեան պատճառով կէս ժամ աւելի երկարեց։ Ժամի տասնեւմէկ և կէսից, Ժան, անհանգիստ, ըմբռնելով որ հազիւ ժամանակ ունէր համեմուտ կայարան, կէսօրից տասն անցած գնացքին, շտապով բարձրանում էր այն սանդուխներէց, որ տանում էր իրան սպասաւորող զինուորի սենեակը, երբ իր վաշտի մարդկանցից մէկ գոչեց նրան։

— Կէս օրին, 3-րդ դնդի, 2-րդ բաժնի զինուորական համազգեստների ցուցահանդէս! Հարիւրապետն առաց, որ ամենքին յայտնեմ։ Դուրս գալու ժամանակ չունէք։

Ժան առանց նոյնիսկ ուշադրութիւն դարձնելու այդ արգելքին, որ ցցւում էր յանկարծ իր առաջ, in extremis, շարունակեց բարձրանալ սանդուխներով։ Նա վճռել էր։ Պիտի մեկնէր։ Պիտի դնար դտնէր, Ռուս—Հէրսբախում իր մօրեղբայր Ուրբիխին, որ սպասում էր նրան կառքով հէնց որ գնացքը տեղ հասաւ։ Ժան մի բանի մասին էր միայն մտածում. դուրս գալ և վազել կայարան։ Շտապով վերցրեց իր քաղաքային շորերն ու փայլուն կօշիկները, իջաւ բակը, և, խառնուելով մի խումբ կամաւորների, որ պատկանում էին ուրիշ զնդերի և ոչ մի պատճառ չունէին զօրանոցում մնալու, առանց դժուարութեամբ անցաւ վանդակադռնից։

Երբ փողոց դուրս եկաւ, պահակատեղից մի քանի մետր

հազիր հեռացած, Բալէյեօր փողոցի մայթի վրայից սկսեց վազել: Մեծ ժամացոյցը իր եկում ցոյց էր տալիս, կէս օրից տասնեկօթ ըրպէ պակաս: Պէտք է ժամանակ գտնէր հասնելու ընակարան, բարձրանալու իր սենեակը և, փոխելով իր համազգեստը, քաղաքացիական շորերը հագնելու: արդեօք պիտի բաւէր ժամանակը: Պիտի կարողանար ժամանել գնացքին: Որովհետեւ պէտք է ամբողջ քաղաքը կտրէր անցնէր: Իսկ, միւս կողմից, չափազանց մեծ անխոհեմութիւն էր փորձել համազգեստով անցնել սահմանադիւրից: Ժան, վազելով հանդերձ, մտածեց որ կարող էր հեշտութեամբ տանել մի պայուսակ և փոխել հազուստները կամ գնացքում, կամ Ռուս—Հերսաբախում: Մտնելով տան նրբանցքը, կանչեց դռնապանուհուն, և շնչասպառ.

— Ես պէտք է որ մի տեղ գնամ սաստիկ շտապով, ասաց: Հաճեցէք հրապարակից մի կառք կանչել: Ես այս ըրպէիս կ'իջնեմ:

Երեք ըրպէից յետոյ, մի պայուսակի մէջ ղետեղել էր արդէն տափառը, ժակէտը, գլխարկը, որ նախնապէս հէնց առաւօտուանից պատրաստել էր և դրել՝ իր անկողնու վրայ, և ցատկելով կառքի մէջ զգուշութիւնն ունեցաւ տալու միայն իրրեւ հասցէ. «Մեղանժ փողոց»: Բայց կառքը հազիր մտել էր փողոցի առաջին դարձուածքը, որ վեր կացաւ և հրամայեց.

— Կառապան, բշիր կայարան, սրարշաւ:

Վերջին ըրպէին հասաւ. վերցրեց մի տոմսակ Ռուս—Հերսաբախի համար և մտաւ առաջին կտրգի մի բաժանմունք, ուրիշ երկու ճանապարհորդների հետ: Մի ըրպէ էլ և գնացքը շարժուեց, սահեց երկաթուղիների վրայով, միուեց փապուղու (tunnel) մէջ, որ միջահատում է քաղաքի ամբողջիւնները, եկաւ լոյս աշխարհ և կտրելով Ալդասի հովիտը, թաւալուեց դէպի արեմուտք:

Հէնց նոյն ժամին, հարիւրապետը, որ աչքի էր անցնում բակում զինուորական իրեղէնները, նշմարելով իր վաշտին յատկացրած երկու կամաւորներից միայն մէկին, հարցրեց վախտմէյտըրին.

— Ո՞րտեղ է միւսը:

— Ես նրան չեմ տեսել, պարոն հարիւրապետ, պատասխանեց Համմ:

Եւ դառնալով դէպի երիտասարդ Սաքսօնը՝ Օբէրլէի ընկերով.

— Դուք գիտէք որտեղ է նա:

— Զինուորական վարժութիւնները անելուց յետոյ նա դուրս եկաւ, պարոն վախտմէյստըրը, և դեռեալ չի վերադարձել:

— Առաջին անգամն է, միմեաց հարիւրապետը, չեմ պատ-
փի: Երեւի նա չհասկացաւ. բայց երբ վերադառնայ, դուք իմ
կողմից նրան դիտողութիւն կ'անէք, չմոռանաք Համմ:

Դէպքը ուրեմն անմիջական հետեանքներ չունեցաւ: Բայց
երբ մարդիկը նորից հաւաքուեցին ձիաները դարմանելու
համար, որը տեղի էր ունենում ամէն օր ճաշից յետոյ, Ժամի
մէկից մինչև երկուսը, Ժանի բացակայութիւնը չէր կարող
չնկատուել: Ախոռների ամբողջ երկարութեամբ, դրսի
կողմը, ձիերը կապուած էին երկաթեայ օղակների:
Հեծելազօրքի զինուորները խոզանակում էին իրանց
ձիաները, նրանց մէջ էին և նախորդ օրը եկող կամաւորնե-
րը, որոնք ձիադարմանութեան դասեր էին առնում, իրանց
երկրորդ մարզիչի հսկողութեան տակ: Տառնապետները ան-
փութութեամբ հսկում էին, երբ երրորդ բաժնի վախմէյս-
տըրը դուրս եկաւ իր գրասենեակից և քայլերը ողղեց բակի
հարաւային կողմը, որտեղ պէտք է գտնուէր Օբերլէյն: Հաստ
շրթունքներով խածնում էր իր կարմիր բիսիւրը: Նա հայեացքը
շուռ տուեց ամբողջ շարքի վրայ:

— Օբերլէյն ուրեմն չի վերադարձել, ասաց նա:

Նոյն ընկերը պատասխանեց.

— Զօրանոցից դուրս գալու և իր սենեակի կողմը գնալու
Ժամանակ նա վազում էր:

— Ծաշարանում նրան տեսա՞ք:

— Նա մեզ հետ չնախաճաշեց:

— Այդ չափը բաւական է, ասաց վախտմէյստըրը:

Համմ արագ հեռացաւ: Նա դէմքի մի ծամածուռ շարժում
գործեց, միևնոյն ժամանակ թաւալեց իր շէկ աչքերի բիւրերը,
որով ցոյց էր տալիս, թէ դրութիւնը ծանր է: Այն նա շատ
ծանր էր գտնում դրութիւնը Օբերլէյի համար. բայց և նոյն-
քան լուրջ իր համար: Ոչ՝ հարիւրապետը և ոչ էլ տեղակալը
այդ բոլորում զօրանոցում չէին: Եթէ դիպուածով մի անհամ
պատմութիւն դուրս գար, հարիւրապետը անպատճառ կ'առէր.
«Ինչու ինձ լուր չտուիք»: Համմ բակի ամբողջ երկարութե-
ամբ քայլեց, խորհելով թէ ի՞նչ կարելի էր անել և յիշելով իր
հօր՝ Օբերլէյի տառնապետի խօսքերը: Այս վերջինը միթէ բառ
առ բառ իրան չէր ասել, երբ նա տառնահինգ օր առաջ գնա-
ցել էր Օբերլէյ. «Շուտով դու քո զօրագնդում կ'ունենաս Պ.
Օբերլէյի որդուն: Լաւ հետեիր նրան: Ես շատ կը դարմանամ,
եթէ նա իր մասին խօսեցնել չտայ: Նա ճիշտ իր մեծ հօր պա-

տկերն է, մի կատաղած, որ ատում է գերմանացիներին և որը ընդունակ է մի անմտութեան։»

Բայց հարկաւոր էր տեղեկութիւններ հաւաքել, նախ քան փութաջանութիւն ցոյց տալը։ Դա դժուար չէր։ Բալէյնօր փողոցը գտնուում էր վանդակապատի դիմաց։ Համմ մատների ծայրով իր կապոյտ պատմութեան փողիները թափ տուեց, խոտորուեց դէպի զօրանոցի դուռը և զնաց ժանի տանտիրուհու մօտ, կանաչ փեղկերով ձախակողմին մեծ տունը։

Նա ստացաւ հետեւեալ պատասխանը.

— Կէս օրից առաջ կառքով մեկնեց, մի ճանապարհորդական պայուսակով։

— Ի՞նչ հասցէ տուեց։

— Մէղանժ փողոց։

— Առանց համարի։

— Յամենայն դէպս ես չլսեցի։ Ձը դիտեմ։

Համմի կռակածը ճշտուում էր։

Վախումէյստըրը այլ ևս վարանելու կարիք չուներ։ Նա վաղեց հարիւրապետի մօր, որը ապրում էր նոր թաղերից մէկում, Հէրտէր շտրասէի վրայ։ Հարիւրապետը տանը չէր։

Յուսահատած և ման գալուց արեւնը տաքացած, Համմ վերադառնում էր զօրանոց կարճ ճանապարհը բռնած, կտրել անցնելով Համալսարանի պարտէզները, երբ յիշեց, որ հէնց շատ մօտիկ, Գերմանիա փողոցի տների կոյտի ետև, Գրանդի-դիէ փողոցում բնակուում էր տեղակալ Ֆարնովը։

Այս վերջինը երկրորդ գնդին չէր պատկանում։ Բայց Համմ լսել էր սպայի նշանախօսութեան մասին։ Այդ մասին խօսուել էր աստիճանաւորների շրջանում։ Նա բարձրացաւ հոյակապ տան առաջին յարկը, որը շինուած էր միակտուր, կանոնաւոր և ցայտուն քարերով։ Երբ հարց տուեց տեղակալին սպասաւորող զինուորին, այս վերջինը պատասխանեց.

— Պարոն տեղակալը հաղնուում է։

Եւ արդարև տեղակալ Ֆոն Ֆարնովը հաղնուում էր մի քանի այցելութիւններ անելու և յետոյ սպաների կազինօն գնալու համար։ Անդրավարտիկով և շապիկով, կռացած մի արդուզարդի սեղանի վրայ, որը ծանրաբեռնուած էր սանդղներիով, վրձիններով և արդուզարդի այլևայլ առարկաներով։

Նա լուսնում էր երեսը։ Սենեակում զգացուում էր օդը-կօլօնի բուրմունքը։ Նա դարձրեց դէմքը դէպի վախումէյստըրը և մի անձեռոց վերցնելով՝ ասաց.

— Այդ դժէք էք, Համմ։ Ի՞նչ է պատահել։

— Պարոն տեղակալ, ես ինձ թոյլ տուի մտնել ձեզ մօտ, Յուսուար, 1906.

որովհետև իմ հարիւրապետին տան չգտայ, և որ կամաւոր Օրէրլէն...

—Օրերլէ: Ինչ՞ է արել Օրէրլէն, ընդհատեց Ֆարնովը, և մի ջղային ցնցում ունեցաւ:

—Ահա տասնըմէկ և կէս ժամ է որ նա չի յայտնուել:

Ֆարնովը, որ դէմքը սրբում էր, նստեց ուժգնութեամբ սրբիչը սեղանի վրայ և մօտեցաւ ենթասպային: Նա յիշեց տիկին Օրէրլէնի երկիւղները: Իսկ Համմը մտածեց. «Նա նոյն բանն է խորհում ու կարծում, ինչ որ ես»:

—Ինչպէս, չի՞ յայտնուել: Բալէյիօր փողոցը գնացի՞ր:

—Այո, պարոն տեղակալ. Նա հեռացել է տանից կառքով, կէս օրից տասը ըոպէ պակաս:

Երիտասարդ տեղեկալը զգաց թէ ինչպէս մահուան սարսուռը դիպաւ իր սրտին: Մի վարկեան նա աչքերը փակեց, մի ուժգին ջանք գործ դրեց, որպէսզի ինքն իրան տէր եղող մարդու կերպարանք ստանայ և այդ նրան աջողկեց: Նա գուհատուել էր, բայց իր դէմքի ոչ մի մկանը չէր շարժուած, երբ նա առաց.

—Դուք միայն մի բան կարող եք անել, Համմ, այն է գնալ յայտնել ձեր հրամանատարին: Նա տեղեկութիւններ կը հաւաքէ և կ'անէ... Ինչ որ սահմանուած է այսպիսի դէպքերում:

Ֆարնովը նոյնիսկ ուժ ունեցաւ նայելու սաքսոնական զարդարուն ժամացոյցին, որը պճնում էր իր սեղանը, և աւելացրեց.

—Երկուսից քսան պակաս, պէտք է շտապել: Վախմէյստերը բարեկեց ու հեռացաւ:

Սպան իսկոյն վազեց իր աշխատասենեակը, որ կից էր լուացարանին և խնդրեց որ հաղորդակցութեան մէջ գնեն իրան Ստրազբուրգի կայարանի վերահսկիչ գործակալներից մէկի հետ: Տաս ըոպէից յետոյ նրան կանչեցին հեռախօսի դանդով և հաղորդեցին որ մի կամաւոր, հուսարների գնդից, համադգեատով, վերջին ըոպէին հասել էր կայարան մի պայուսակով, և վերցրել էր առաջին կարքի մի տոմսակ Ռուս-Հէրսթախ գնալու համար:

—Ո՛հ, դա անկարելի է, բացագանչեց Ֆարնովը, ընկնելով իր աշխատասենեակի բաղմոցի վրայ: Այստեղ մի սխալմունք կայ... Ռուս-Հէրսթախ. սա համարեա թէ սահմանն է, և ժամը չի կարող փախչել, որովհետև նա սիրում է... Նա պէտք է որ Ալշէյսովը լինի... Երևի նա ուղեց Օդիլին տեսնել... Իսկոյն գնամ իմանամ:

Նա բռնեցքով խփեց իր ընկուզենու սեղանի վրայ.

— Հէրման:

Սպասաւոր զինուորը, մի լայնաթիկունք գերմանացի, բաց արեց դուռը:

— Թաճիրը իմ ձին և բռնը, շնու:

Ֆարնով շտապով պատրաստուեց, վար իջաւ, և փողոցում արդէն պատրաստ գտաւ երկու ձիերը, դուռն եկաւ Ստրազուրգից և երբ քաղաքի ամբուստներէն անցաւ, սկսեց քառասորակ քշել ձին լայն ճանապարհով:

Որքան մօտենում էր Ալշէյմին, այնքան աւելի հակում էր ժանի դասակարգի հաղափարն ընդունելու: Տիկին Օրբերլէին հետ ունեցած խօսակցութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով՝ պատկերանում էր իր մտքի առաջ, ինչպէս և այլ պատճառներ՝ հաւատալու գործողութեան, որի դեմ իր հրամայողական կամքը կուռում էր տաժանելի կերպով:

«Նա անքան քիչ է ճանաչում Գերմանիան: Նա այդ փառք էր համարում իրան Բրաւսիգ խորհրդականի տունը... Եւ յետոյ, իր երկպառակուած ընտանիքը, իմ նշանախօսութիւնը, որ աւելի շեշտեց պառակտումը... Եւ սակայն նա էլ է նշանուած, կամ համարեա նշանուած... Եւ նրա բնաւորութեան տէր մարդիկը, ֆրանսիական բնաւորութիւնն ունեցող մարդիկը պէտք է որ յաղթահարուեն սիրուց... Ո՛հ... Ես նրան կը դըտնեմ այնտեղ... կամ կ'իմանամ թէ սրտեղ է:»

Օդը տաք էր երկար, առանց հովանու ճանապարհի վրայ, որ տարածում էր իրրեւ փոշու մի լայն ժապաւէն, մի գիւղից միւսը, հնձուած դաշտով: Երկինքը՝ հովտի վերեւ, պղտոր էր և պղնձեայ հորիզոնում, Վոթերից այն կողմ, անշարժ, ճաճանչայեղձ ամպի կատարներ կային: Քրտնաթաթախ ձիերը գնում էին միշտ սրարշաւ: Մենաւոր կաղնիների տակ, խողանների մէջտեղ, պատանիները բարձրացնում էին պտուղ թափելու իրանց գաւազանները և երգում էին ձիաւորների տնցնելու ժամանակ:

Հէրման մտածում էր. «Ի՞նչ է պատահել, Տէր Աստուած, պարոն տեղակալը գփում է: Հետզհետէ աւելի արագ է քշում ձին:

Ֆարնով քանի մօտենում էր, այնքան լեցւում էր անձկութեամբ:

«Եւ եթէ նրան չգտնեմ... Եթէ, իսկապէս...»

Օրբերլէն մնաց աջ կողմը: Մի կողմնակի ճանապարհ մագլցում էր դէպի Ալշէյմ: Շուտով Օրբերլէների կապոյտ տանիքը երևաց և մեծացաւ դաւարիքների մէջ:

«Լիւսիէն: Լիւսիէն: Լիւսիէն:»

Անան այդ փոթորկալից ջերմութեան տակ թմրած տան մէջ մի ձայն միայն խզում է լռութիւնը, և անբաժնի միօրինակե-
րա ափէին Մօնիկ Օրերլէի ձայնն է: Պապի բազկաթոռի ա-
ռաջ, այն սենեակում, որից էլ չի հեռանում անկարը, տիկին-
Օրերլէ բարձրաձայն կարգում է, «Ժուրնալ դ' Ալգասը», որով-
հետև ցրիչը բաժանել է արդէն երեկոյեան թղթատարը: Բաց
թողնուած պատուհանից լսւում է բառերի մրմունջը, և դա յի-
շեցնում է համարիչին ընկերացած աղօթքի ներդաշնակ արտա-
սանութիւնը: Գնդամուղի սրահում, այն սենեակի տակ, որ
հատկացրած էր միշտ Ժանին, պ. Ժոզէֆ Օրերլէ, վարազուրի
շուաքի մէջ նստած՝ մրափում է, ծնգների վրայ մի քանի նա-
մակներ, և «Ստրագղուրգեր Պօստի» մի համարը: Սենեակի
միւտ ծայրում, նոյնպէս ստուերի տակ, Լիւսիէն կուացած՝ Լու-
դովիկոս XV-ի տիպի մի փոքրիկ դրասեղանի վրայ, գրում է:

— Պարոն, պարոն Օրերլէ:

Գործարանատէրը ընդոստ դարձնեց, և արագ ուղղուե-
լով, լայն բաց արեց դուռը, որը կիսով միայն բաց էր և հա-
սաւ նախասենեակում սպասաւորի ետեւից, որ շտապով գալիս էր:

— Խնչու ձայն էք տալիս: Գիտէք որ չեմ սիրում...

Մի բոպէ խօսեց ծառայի հետ, և մտաւ սենեակը, շոգո-
ղուն դէմքով:

— Լիւսիէն, աղջիկս, պ. դը Ֆարնուլը սպասում է քեզ
պարկի վանդակադռան առաջ:

Նա արդէն վեր էր կացել, վարդ կտրած դէմքով:

— Նա: Խնչու համար ներս չի գալիս:

— Երևի ձիով է, շատ շտապում է... Գուցէ և չի համար-
ձակում... Սիրելիս, գնա իմ կողմից կանչիր նրան... Ասա որ
ոչ մի գայթակղութիւն չի պատճառիլ. ես խօսք եմ տալիս ար-
գելիլ որևէ նոր անախորժութիւն:

Ինքն իրա վրայ դարձող ձեռքի մի շարժումով սոյց էր
տալիս, որ աւելի շուտ կը փակէր վերևի դռները, որտեղից
գալիս էր լրագրի ընթերցանութեան միօրինակ շշուկը:

Լիւսիէն հայելու մէջ նայեց, և կարբի բերեց մազերը:
Հայրը կրկնեց.

— Գնա, գոհարս, քեզ է կանչում: Եթէ շուտով չգաք, ես
կը գամ ձեզ մօտ:

Լիւսիէն բարեկրկն հեռացաւ: Երկուս առ երկուս իջաւ
վերնահատի մատիճաններից: Նա ծառուղու միջով քայլում էր:

արագ-արագ, մի քիչ խոտվուած, բաղդաւոր, շրթները կիսա-
բաց, աչքերով փնտռելով Ֆարնովին:

Միայն երբ հասաւ ծառուղու ծայրին, տեսաւ երկու ծխա-
շունչ, քրտնաթոր ձիերին, որ կանգնել էին ճանապարհի վրայ
և որոնց սանձից բռնել էր Հէրմանը, և համարեա միւսնոյն ժա-
մանակ սպային՝ որ պատի ստուերից դուրս գալով առաջա-
նում էր դէպի իրան:

Տէր Աստուած, սրբան կարմրել է այսօր Ֆարնովի առ
հասարակ դժգոյն դէմքը, սրբան մտատանջ կերպարանք ունի,
և սրբան շտապում է: Բայց նրա շտապանքը ուրախութիւնից
չէ, որովհետեւ նա ոչինչ չի պատասխանում Լիւսիէնի, որ սկսել
է արդէն համարեա վազել, աշխատելով ժպտալ:

— Բարև Լիւիէլէմ: Այդ ի՞նչ գեղեցիկ անակնկալ է:

Ֆարնով վեր է առնում գլխարկը. բռնում է դէպի իրան
և երկարող ձեռքը, բայց փոխանակ համբուրելու, փոխանակ
նրանով հիանալու, ինչպէս սովորաբար, իր կարծի աչքերով,
որոնք տենդավառոււմ են—բաշում է Լիւսիէնին մի կողմ, առանձ-
նանալու համար: Լիւսիէնի սուր շրթունքները յամառում են
ժպտալ. նրանք արի են, իրանց բաղդաւոր են ցոյց տալիս,
մինչդեռ սիրտը արդէն սեղմուած է անձկութեամբ:

— Ի՞նչ, ինձ պիտի առևանգէք: Իմ բարեկամը սրբան
անընտել է դարձել, որ մինչև անգամ բարեկիս չի պատասխա-
նում: Դուք սակայն, այսքան քաղաքավարի...

— Եկէք... Ահ, այստեղ, մեզ չեն կարող տեսնել...

Նրանք ատողծարանի ծայրին են հասել համարեա, մի տե-
սակ առանձնարանում, որ կազմուած է տախտակի երեք անհա-
ւասար անդերից: Ֆարնով բաց է թողնում Լիւսիէնի ձեռքը:

— Ժանն այստեղ է: Լսիր, լսւ լսիր ինձ. Ալշէյմսն է:

Ամբողջ անձկութիւնը և ամբողջ անհամբեր երիտասար-
դութիւնը, որ կամենում էր տիրապետել, հրամայել դժբաղ-
տութեան, Ֆարնովի աչքերի մէջ ցոլանում էին և որոնում էին
պատասխանը:

— Չէ, պարզ պատասխանց, Լիւսիէն:

— Գոնէ չէք սպասում նրան:

— Բնաւ:

— Ուրեմն, կորանք, օրիորդ: Կորանք:

— Օրիորդ:

— Այո, եթէ նա այստեղ չէ, ուրեմն նշանակում է դասա-
սիք է եղել:

— Ահ:

Երիտասարդ աղջիկը մի ուժգին շարժում գործեց դէպի

ևտ, որպէս թէ վայր ընկնէր, և յենուեց տախտակներին, թե-
ւերը բաց արած, աչքերը մոլոր:

— Դասալիք է եղել... Կորանք... Բայց միթէ չէք տես-
նում, որ ինձ սպանում էք այդ անսակ խօսքերով... Միթէ,
խեղապէս, ժամն... Վստան էք...

— Քանի որ նա այստեղ չէ, այո, վստահ եմ... Նա տոմ-
սակ է վերցրել Ռուս-Նէրսարախի համար... Նա արդէն անցած
կը լինի սահմանագլխից... Ես ձեզ ասում եմ, որ նա՝ ահա և-
րեք ժամ է ինչ հեռացել է Ստրագրուրգից...

Ֆարնով ցնցուեց ցաւի զայրոյթի մի ծիծաղով:

— Ի՞նչ, միթէ չէք յիշում: Նա երդուել էր ձեր մօրը, որ
պիտի զինուորագրուի, մտնէ զօրանոց: Արդարև նա մտաւ:
Բայց նա իր խոստումը այսօր կատարել վերջացրել է: Եւ դա-
սալիք է եղել, փախել ընտանիք... Իսկ, այժմ:

— Այո... այժմ:

Լիւսիէն ուրիշ ապացոյցներ չէր պահանջում: Նա արդէն
հաւատում էր: Նրա կուրծքը հեռւմ էր: Նա բաց թողեց տախ-
տակները, որոնց ընկել էր պինդ և պաղատագին միացրեց եր-
կու ձեռքերը: Նա հարկադրուեց վշտից անշարժ կանգնած
Ֆարնովին ուղղելու միևնոյն հարցումը:

— Այժմ ի՞նչ պիտի անէք, Վիլհէլմ:

Ֆարնով, պրկուած դիմագծերով, ուղիղ կանգնած իր
փոշոտ համազգեստի մէջ, ասաց տկար ձայնով.

— Թողնե՛լ ձեզ...

— Թողնե՛լ ինձ, որովհետև եղբայրս դասալիք է եղել:

— Այո:

— Բայց դա անմիտ է, ինչ որ ասում էք:

— Այդ է զինուորի իմ պարտականութիւնը:

— Ուրեմն դուք ինձ չէք սիրում:

— Օ՛հ, ինչպէ՞ս չէ, սիրում եմ... Միայն թէ արժանա-
պատուութիւնը այլևս թոյլ չի տալ ինձ ամուսնանալ ձեզ հետ...
Ես չեմ ուզում մի դասալիք զինուորի փետան լինել, ես՝ սպայ,
ես՝ Ֆարնով:

— Այդ դէպքում թողէք սպայութիւնը և շարունակեցէք
սիրել, աղաղակից Լիւսիէն բարձրացնելով բազումները դէպի
կապտած, անշարժ արձանը: Վիլհէլմ խակահաւ արժանապա-
տութիւնը կայանում է սիրել Լիւսիէն Օբերլէին, չլքել նրան,
չգրծել նրան տրուած խօսքին... Թողէք իմ եղբօրը. թող զնա
ուր կամենում է. բայց մի խորտակէք մեր երկուսի կեանքը:

Ֆարնով հազիւ կարող էր խօսել: Լոեց մի րոպէ: Իր

կամքի ճիգը ուռեցնում էր իր վզի բոլոր մկանները, երբ ա-
սաց.

— Աւելի վատը կայ: Ո՛չ, դուք պէտք է որ իմանաք ամբողջ
ճշմարտութիւնը, Լիւսիէն: Ես պարտաւոր եմ նրան մասնակի:

— Մատնէլ ժանին: Ո՛չ, դուք այդ չէք անի, աղաղակեց
Լիւսիէն, նահանջի մի շարժում անելով: Ես արգելում եմ ձեզ:

— Այս բոպէիս պիտի անեմ: Զինուորական օրէնքն է հար-
կադրում:

— Ո՛չ, դա ճիշդ չէ: Այդ տեսակ անգթութիւններ չեն կա-
րող դրուած լինել այնտեղ:

— Հէնց այս բոպէիս կը համոզուէք... Հէրման:

Մատնէլ յատնուեց և Ֆարնուից և Լիւսիէնից տասը քայլ
հեռու, ծառուղու բերանը, դարմանքից շուարած և վազքից
դիմազծերը դեռ ևս ուռած:

— Լուս լսիր ինձ: Մտաբերի՛ր օրինագրքի յօդուածը: Ի՞նչ
է հրամայում, երբ մէկը տեղեկութիւն ունի որ մի զինուոր
պէտք է դատաւիք լինի:

Զինուորը մի բոպէ ամփոփեց միտքը և արտասանեց.

«Ով որ տեղեկութիւն է ունեցել, արժանահաւատ աղբիւ-
րից, դատաւրութեան մի ծրագրի մասին, մի այնպիսի բոպէում,
երբ դեռ ևս կարելի էր խանդարել, և որ չէ նախազգուշացնում
իր պետերին, կը պատժուի մինչև տասն ամսուայ, իսկ կռուի
դաշտում մինչև երեք տարուայ բանտարկութեամբ»:

— Շուտով բեր այստեղ ձիերը, պէտք է մեկնենք:

Եւ դառնալով՝

— Մնաս բարեան, Լիւսիէն:

Լիւսիէն վազեց դէպի Ֆարնուի. բռնեց նրա թևից.

— Ո՛չ, ո՛չ, աղաղակեց, չպէտք է մեկնէք: Ձեմ ուզում:

Ֆարնուի մի բոպէ դիտեց այդ արտասուածքոր դէմքը, ուր
խառնւում էին կրակոտ սէրն ու վիշտը: Լիւսիէն կրկնեց.

— Ձեմ ուզում, լսում ես:

Այն ժամանակ Ֆարնուի գրկեց նրան իր բազուկներով,
բարձրացրեց գետնից, սեղմեց կրծքին, և, կրքով, համբուրեց
նրա աչքերը, որ էլ չէր ուզում տեսնել: Եւ համբուրի յուսա-
հատ ուժգնութիւնից միայն Լիւսիէն հասկացաւ, որ դա իսկա-
պէս մի հրաժեշտ էր:

Ֆարնուի նրա յետ մղեց ցրտութեամբ, վազեց դէպի վան-
դակադուռը, ցատքեց թամբի վրայ, և սրարշաւ մեկնեց Օբեր-
նէի ուղղութեամբ:

XVI

Մինիէոի անտառում

Գիշերը մօտ էր: Ժան դեռևս չէր դուրս եկել ընտ գերմանական անտառներից: Ժան, խոնջէնքից ուժասպառ, մամուռի և կաղնու լեզուանման տերեւների վրայ պառկած՝ քնում էր, և պ. Ուլրիխ հսկում էր, ուշադիր դէպի հաւանական վտանգրտակաւին յուզուած նրանից, որից նոր էր խուսախել: Երկու մարդիկը գրաւում էին ստորին մասը այն նեղ տարածութեան, որ թողել էին փայտահարները խուրձի երկու դէզերի մէջտեղ: Կաղնու մի պուրակ էին ցանցառացրել: Դեռ կանաչ, հիւթալից ճիւղերը չէին սմբել և կազմում էին մի ապահով ապաստանաւան: Նրանց շուրջը լեռան բարձր ծառերը բաց էին անում իրանց կատարի փնջերը փոթորկալից քամու առաջ, որ փչում էր: Ուրիշ ոչ մի աղմուկ չէր հասնում մինչև այդ բարձրութիւնները:

Մօտաւորապէս երկու ժամ կար, որ պ. Ուլրիխ և իր քրոջորդին այդտեղ էին ապաստանել:

Երբ գնացքը հասել էր Ռուս-Շէրսրախ կայարանը, Ուլրիխ մօրեղբայրը իսկոյն հասկացել էր և ժանին ասել՝ որ ժամանակը անցել էր համազգեստը հանելու: Այդ փոքրիկ, աննշան դէպքը շատ շատերի ուշադրութիւնը պիտի գրաւէր այդ սահմանազլխային վայրում, որը լիքն է տեսանելի և անտեսանելի դիտողներով, ուր քարերը լսում են և կաղնիները տեսնում: Մի հայհոյանքով նա գցել էր պայուսակը կառապանի առաջ, որը վարձուած էր երեք օրից ի վեր Շիրմէկում:

— Ահա մի աւելորդ բեռ, մոլտացել էր: Բարեբաղդաւար ծանր չէ: Ձիաները լաւ քշեցէք, կառապան:

Ձիերը մտել էին այն ճանապարհը, որ անցնում է Շիրմէկ քաղաքիս մօտիկ գտնուող մի խղճուկ գիւղի միջից, թողել՝ զբլխաւոր հովիտը և աջակողման նեղ ու ոլորապտոյտ հովտով բարձրացել էին դէպի Մեծ-Աղբիւրը: Ոչինչ ցոյց չէր տալիս, թէ կասկածներ էին զարթեցնում ուղևորները: Բայց նրանց կարծեցեալ զրօսանքի ծանօթ վկաները աւելանում էին: Եւ դա մի ծանրակշիռ հանգամանք էր: Որքան որ էլ ժան կիսաթագնուած էր, մեծ մասամբ ծածկուած՝ կոտքի պատուհանի վաւազոյրով և մի ծածկոցով, որ պ. Ուլրիխ գցել էր իր քրոջ որդու վրայ, անկասկած, նրա չափազանց փայլուն համազգեստի հոտը պէտք է որ առած լինէին Շիրմէկի փողոցներում խա-

չաձև կանգնած ոստիկանները, և ճանապարհի վրայ եղող քա-
րահանքերի մէջ աշխատող բանուորները և այն մաքսային պաշ-
տօնեան, որ ծխում էր և շարունակել էր ծխել այնքան հան-
դարտութեամբ իր ծխամղրճը, նստած՝ ծառերի հովանու տակ
Մեծ-Աղբիւրի առաջին կամուրջի ձախակողմում: Պ. Ուլրիխ
ամեն բոպէ իր մտքում ասում էր. «պէտք է որ իմացած լինեն,
և իմաց տուած՝ բոլորին. եթէ այդ դեռ չէ եղել՝ շուտով կը լի-
նի. դուքէ ամեն ինչ յայտնի է արդէն, և որեւէ մէկը՝ պե-
տութեան անթիւ գործակալներից մէկը, կը մօտենայ մեզ, կը
հարցաքննէ և, ինչ էլ որ պատասխանենք, մեզ լրտեսել կը տայ:»
Նա իր երկիւղները ամենեւին չէր հաղորդում ժանի, որի տրա-
մադրութիւնը նախորդ օրուանից բոլորովին տարբեր էր. նա
չափազանց ոգևորուած էր իր փախուստի գաղափարով:

Կառքը՝ հակառակ զառիվերի և ճանապարհի գայլախազ-
ներին, արագ բարձրանում էր հեղեղատի երկարութեամբ և
մանում էր Մեծ-Աղբիւրի տների միջև՝ ժամի երկուսից տասնե-
հինգ բոպէ անց էր, երբ ձիերը կանգ առան գիւղի կենտրո-
նում, մի թեք հրապարակում, ուր մի աղբիւրի ջուրը թափ-
ւում էր քարէ մի մեծ տաշտի մէջ: Ծանապարհը կառքի համար
այլևս անյարմար լինելու պատճառով, ուղևորները իջել էին
կառքից:

— Գնացէ՛ք մեզ սպասեցէ՛ք Ռէմի Նաէգերի պանդոկում, ա-
սել էր պ. Ուլրիխ: Մենք կը կատարենք մեր զբօսանքը և մի
ժամից կը վերադառնանք... Ձիաների կերը կրկնապատկեցէ՛ք
և իմ հաշուից Մօլլայմի մի շիշ գինի կոնծեցէ՛ք:

Ու այնուհետև պ. Ուլրիխ և ժան ճանապարհ ընկան դէ-
պի Մինիէտի անտառը:

Հազիւ երկու հարիւր մետր առաջ էին քնացել, երբ նըշ-
մարեցին Մաթիսկորֆի անտառապահը, որ զառիվայրով իջնում
և գալիս էր դէպի իրանց կողմը: Մարդը տիրօխան գդակ ծած-
կած, կանաչ բլուզ՝ հագած, գալիս էր իր տանից, որ գտնւում
է Մինիէտի բարձուքներում, և մտնում էր այն նրբուղին, ուր
պէտքէ անպատճառ հանդիպէր երկու ճանապարհորդներին:

Պ. Ուլրիխ վախեցաւ:

— Ժան, ասել էր, ահա մի համազգեստ, որին նախամե-
ծար կը համարէի հանդիպել աւելի ուշ: Մտնենք անտառը:

Անտառը ձախակողմումն էր: Մաթիսկորֆի կաղնուտներն
էին և քիչ հեռու ձգւում էին Կորբէյլի թաւուտները, թանձրա-
խիտ զառիվայրներ, ուր թագաւորները անպակաս պէտք է լինէին:

Ժան և մօրեղբայրը անցան ցանկապատից և մտան կաղ-
նիների ստուերի մէջ:

Ճիշդ ժամանակն էր: Ստրագրուրգի զինուորական վարչութիւնը անմիջապէս զգուշացրել էր սահմանապահներին: Մեծ Աղբիւրի ժաքսատան և շրջակայ բոլոր պահականորդներին հեռախօսով լուր էին տուել, որպէսզի արգելեն կամաւոր Օքերլէի փախուստը: Անտառապահը, որ ոչ մի նախազգուշացում չէր ընդունել, երեւոյ չեկաւ: Բայց ժան և պ. Ուլրիխ—սա վերցրել էր Իէնայի հին հեռագիտակը—շուտով նկատեցին անհանգստացուցիչ երթեկեւեկներ: Խաղաղ հովտում իսկոյն երեւոյին ժաքսային պաշտօնեաներ և ոստիկաններ: Նրանք էլ ժտան Մաթիսկորֆի անտառը:

Եւ փախուստը սկսուեց:

Պ. Ուլրիխի և ժանի հոռից չհասան, բայց նրանք նկատուեցին: Մի ամբողջ ժամ նրանք հալածուեցան պուրակից պուրակ, և սակայն անկարող եղան սահմանադիւից փախչել, որովհետեւ պէտք էր այդ դէպքում անցնել հովտի խորքից, որը բաց էր, անտառածածկ չէր:

Պ. Ուլրիխ հնարամտութիւն էր ունեցել ժաղկելու ժանի հետ փայտի դէղերից մէկի գագաթը և թաւալուելու՝ զիպուած խուրձերի միջև գտնուող մի բացուածքում: Ահա այդ հնարքը ազատել էր փախստականներին: Ոստիկանները, մի ժամանակ կաղնուտի մէջ թափառելուց յետոյ, հեռացել էին և գնացել Գլասիմոնի ուղղութեամբ:

Ժանը քնել էր, և գիշերը վրայ էր հասնում: Քամին կուտակում էր ամպերը և արագացնում էր մութը: Ագտանների մի երամակ՝ քսուելով ծառերի կատարներին սահեց անցաւ: Նըրանց թևաբաղխումի շրջիւնեց Ուլրիխը սթափուեց իր երազանքից, ուր խորասուզել էր նրան իր քեռորդու տեսքը, գերմանացի հեծելազօրքի իր համագլխատով և տարածուած՝ Ալզասի հողի վրայ: Վեր կացաւ և զգուշութեամբ բարձրացաւ կանաչ խուրձերի գագաթը:

—Է՛յ, մօրեղբայր Ուլրիխ, հարցրեց ժան զարթնելով՝ ի՞նչ էք նայում:

—Ոստիկանի ո՛չ մի սաղաւարտ, ժաքսային պաշտօնեայի ո՛չ մի գլուխ, շէնչաց պ. Ուլրիխ կռնալով: Ինձ թւում է, որ նրանք մեր հետքը կորցրին: Բայց պէտք է միշտ զգոյշ լինել այդ մարդկանցից:

—Իսկ Միխիէլի հովտում:

—Ամայի երևոյթ ունի, բարեկամս: Ոչ ոք չկայ երկու ճանապարհներում, ո՛չ էլ գիւղի շուրջի՝ մարգագետիններում: Որսպանն անգամ պէտք է որ տուն վերադարձած լինի և նըս-

տած սեղան, որովհետև այս բոլորիս ծխնելոյզից ծուխը դալարում է... Ի՞նչպէս, իմ փոքրիկ, արիութիւնդ վրձիդ է։

— Կը տեսնէք, եթէ որ մեզ հալածեն։

— Էլ մեզ չեն հալածի։ Բայց, զաւակս, եկել է ժամը...

Մի բոլոր լուծիւնից յետոյ, նա կարծես ականջները սրած մտիկ էր անում, մի կողմի, յետոյ աւելացրեց.

— Վեր կ'աց, որպէսզի մշակենք մեր կռուի ծրագիրը։

Երբ ժան Բարձրացաւ իր մօտ և գլուխը խուրճերի դէպի դուռն ցցելով նայեց դէպի արեւմուտք.

— Տեսնում ես, Ուլրիխ, ցածում, Միխէէլի գիւղը։

— Այո։

— Հակառակ մութին և մառախուղին դու կարող ես նկատել, որ միւս կողմում լեռը ծածկուած է մասամբ կաղնիներով և մասամբ կաղամախիներով։

— Գուշակում եմ։

— Որպէսզի խուսափենք Միխէէլի այգիներից ու մարդագետիւններից, այժմ մի կիսաշրջանակ կը գծենք և երբ կը հասնենք այնտեղ, ճիշդ մեր դէմուդէմը, հազիւ երկու հարիւր մետր կը մնայ իջնելու և այնուհետև արդէն Ֆրանսիայումն ես...

Ժան ոչինչ չը պատասխանեց։

— Այդ տեղը քեզ համար եմ ման եկել ու ճարել։ Պէտք է որ լաւ յիշես. այնտեղ, հեռուն, Ռօն-սիւռ-Պլէնի շուրջը, գերմանացիները իրանց վերապահեցին բոլոր անտառները. նրանք Ֆրանսիային թողեցին բոլոր լերի գետիւնները։ Ուղիղ մեր հանդէպ, դառնվերի միւս կողմում կայ Ֆրանսիական մարզագետնի մի շերտ... Ես այնտեղ տեսել եմ նոյնիսկ մի հին, լքուած աղարակ, որը մնացած լինելու է, եթէ չեմ սխալւում, պատերազմից... Ես առաջ կ'անցնեմ...

— Ոչ, ներողութիւն, ես պէտք է առաջ անցնեմ։

— Ո՛չ, հաւատացնում եմ քեզ, փոքրիկս, որ ետեից գնալը նոյնքան վտանգաւոր է։ Եւ յետոյ պէտք է որ վերջապէս քեզ առաջնորդեմ, չէ... Ուրեմն ես կ'անցնեմ առաջ, խոյս կը տանք կածաններից, և քեզ կ'առաջնորդեմ զգուշութեամբ, մինչև այն կէտը, ուր քիչ կը մնայ միայն մի բան անել. վաղելով կ'անցնես մի ճանապարհի վրայից, կը ծուռես դէպի աջ, կը մտնես անտառը, մի քանի քայլ՝ և անտառից այն կողմ մարդագետիւնը Ֆրանսիական է...

Պ. Ուլրիխ համբուրեց ժանին մթութեան մէջ։ Չկամեցաւ տեսլի երկարել հրաժեշտը, որովհետև վախեցաւ, որ մի գուցէ ինքն իսկ յուզուի մինչդեռ պէտք էր այդ բոլորին կատարելապէս տէր լինել իր աճին։

—Ե՛կ, ասաց:

Նրանք սահեցին մեծ կաղնիների ստուերի մէջ, որոնք տկիզքն էին առնում իրանց մօտից: Զառիվայրը խոչնդոտեց լրով լիքն էր, որոնց բախում էին յաճախ ժանր կամ հօրեղբայրը: Թաւալուած մամռապատ, քարեր, ծառի ջախջախուած, փտած բուռներ, մթութեան մէջ մագիլների նման երկարող ճիւղեր: Ամեն բոպէ Ուլրիխը կանգ էր առնում մտիկ անելու համար: Յաճախ յետ էր դառնում նոյնպէս և իր քամակում նշմարում էր շարունակ ժանի բարձր ուրուագիծը, որի դէմքը չէր տեսնում այլևս:

Երբեմն ժան ասում էր.

—Քթները շատ պիտի կոտրուի, մօրեղբայր:

—Լճու կաց, իմ ժան: Դեռևս չենք ազատուած:

Երկու ընկերները՝ ծռուելով մինչև Մինիէտի մարգագետինների եղբքը, իջան, և նորից սկսեցին բարձրանալ, միշտ սակայն անտառի ստուերով, դեպի Վոթերի հանդիպակաց, վերջին գօտին:

Երբ պ. Ուլրիխ կատարին հասաւ, կանգ առաւ, լայն շնչեց դիմացի կողմից փչող քամին աւելի ազատօրէն, որովհետև ծառերը աւելի մատաղ էին, և հակառակ այն բանին, որ խօսիլը վտանգաւոր էր, մրմնջեց.

—Զգի՛ւ ես Ֆրանսիայի խողանների հոտը:

Նրանց առաջ տարածւում էր մի հովիտ, բայց նա անտեսանելի էր: Միայն կարելի էր ընդշնամարել ծուխի անշարժ բուլաներ, որոնք, ներքեում գտնուող անտառներն էին, և նրանց վերև ծուխի թափառիկ ամպեր էին:

Պ. Ուլրիխ սկսեց իջնել աւելի մեծ զգուշութեամբ, ականջները սրած: Մի չղջիկ թռչկոտեց: Պէտք էր երեսուն քայլաչափ առաջ գնալ փշալից մացառների միջով, որոնք կառոււած էին հագուստներին: Եւ յանկարծ, առջևից, մի ձայն աղաղակեց անտառի մէջ.

—Կաց:

Պ. Ուլրիխ չօքեց, զցեց ձեռքը ժանի ուսին, և արագ.

—Մի շարժուի՛ւ: Ես նրանց կը գրաւեմ դէպի Մինիէտի կողմը: Երբ նրանք իմ ետևից ընկնեն, դու վեր կը կենաս, կ'անցնես ճանապարհի վրայով, յետոյ կը մտնես անտառ, մի բանի քայլ ևս և վերջացաւ: Վազիր ուղղակի դէպի առաջ: Մնաս բարով:

Պ. Ուլրիխ վեր կացաւ, զգուշութեամբ մի բանի քայլ արաւ, յետոյ, անտառի մէջով, վազնիվազ փախաւ:

Ձայնը, որ աւելի մօտեցել էր, նորից դռնէն և երկու անգամ միմիանց ետեից։

— Կանց, կանց։

Հրազէնի մի հարուած ձեղքեց խաւարը։ Երբ ճիւղերի աղմուկը դադարեց, լսուեց ալ. Ուլրիխի ձայնը, որ արդէն բաւական հեռուից պատասխանում էր։

— Անյաջող, վրիպեց։

Միևնոյն ժամանակ ժամն Օրերիէ նետուեց դէպի սահմանագլուխը։ Գլուխը քաշ գցած, առանց ոչինչ տեսնելու, արմուկները բարձրացրած, կուրծքը ճիւղերից մտրակուելով վազում էր իր ամբողջ ոյժով։ Ստիպուեց անցնել մի քանի քայլ հեռու թաղնուած մի մարդու առջևից։ Տերեւները խշրտացին։ Սուլիչի մի սուր ճիչ պատուեց օդը։ Ժամն աւելի արագացրեց վազքը։ Կոխեց յանկարծակի ճանապարհի վրայ։ Իսկոյն պայթեց հրացանի մի երկրորդ հարուած։ Ժամն թաւալուեց անտառի եզերքին։ Միաժամանակ թնդացին աղաղակներ։

— Ահա։ Ահա նա։ Եկէք։

Ժամն անմիջապէս վեր կացաւ։ Նա ընդհարուել էր մի աղօթի։ Յատկեց անտառի մէջ։ Բայց սրունքները տկար էին։ Նա զգում էր որ մեծանում էր իր մէջ մի անխուսափելի տկարութեան անձկութիւնը։ Նրան հալածողների աղաղակները հնչում էին քամակից։ Ծառերը շուռ էին գալիս։ Վերջապէս լոյսի, սառը քամու, ազատ տարածութեան մի զգայութիւն ունեցաւ, և էլ ոչինչ չտեսաւ։

Գիշերը բաւական ուշ, դարթնեց իր ուշաթափութիւնից։ Անտառը ցնցում էր փոթորկից։ Մի լքուած ազարակի սենեակում է, առանց կահ-կարասիքի, լուսաւորուած մի ազօտ կանթեղով։ Նրան պառկեցրել են կոնաչ ճիւղերի վրայ։ Մի մարդ կուացել է դէպի ինքը։ Ժամն նայում է նրան։ Մաքսային մի ֆրանսիացի պաշտօնեայ։ Սարսափի առաջին տպաւորութիւնը ցրում է։ Դէմքը դուրեկան է։

— Ուրիշ հարուած արձակեցի՞ն, հարց է տալիս։

Մարդը պատասխանում է։

— Ո՛չ, էլ չկրակեցին։

— Աւելի լաւ։ Ուլրիխ մօրեղբայրը փրկուած է... նա ընկերացել էր ինձ մինչև սահմանագլուխը... ինչպէս տեսնում էք, բանակումն էի ծառայում... եկել եմ որ ձեզ մօտ զինուոր լինեմ...

Տեսնում է, որ զինուորականի վերաբերուն հանել են, որ

շապկին վրայ արիւնի բիծեր կան... Դժուարութեամբ է շնչում:
— Ի՞նչ է պատահել ինձ:

Մաքսային պաշտօնեան, թանձր, ոլորուած բեխերով մի մարդ, որ եթէ չամաչէր լաց կը լինէր, պատասխանում է.

— Ուսիցդ վիրաւորուել ես, բարեկամս: Ոչինչ չուտով կը բժշկուի... Բարեբաղդաբար մենք ման էինք գալիս այս կողմերում, երբ դուք ընկաք մարգագետնի վրայ: Ընկերս զնաց բժիշկ կանչելու: Արշալոյսին այստեղ կը լինէին...

— Հոգ մի անէք... Ո՞վ էք դուք:

Կիսաերազում, ժան պատասխանեց.

— Ալզասը...

Հազիւ կարող է սակայն խօսել: Փոթորկալից անձրևը սկսել է տեղալ: Նա ծեծում է տանիքները, դռների տախտակները, տերևները, ժայռերը, ամբողջ անտառը որ շրջապատում է տունը: Ծառերի կատարները գալարում են և թաւալում, ինչպէս ծովու խորքերում ջրմուռի (algues) մագերը: Մի անսահման մրմունջ, ուր միախառնուել են բիւրաւոր ձայներ, բարձրանում է դէպի Վոժերի գագաթը և ծաւալում գիշերի մէջ: Վիրաւորը ականջ է դնում: Ի՞նչ անցաւ մտքովը: Նա թոյլ է: Ժպտում է:

— Ֆրանսիան է երգում, շշնջում է նա:

Եւ, աչքերը փակելով, նորից ընկնում է անկողնու վրայ, արշալոյսին ակնկառոյց:

Վ Ե Ր Ջ

* *
*

Միշտ զգում եմ ես, որ մի հեռաւոր,
Օտար աշխարհում ինձ պէս վշտահար
Մի սիրտ է այրւում՝ անյայտ, մենաւոր
Եւ երազում է, թախծում ինձ համար:

Եւ թւում է ինձ, որ սուրբ համբոյրով
Ես փայփայում եմ ձեռները նորա.
Եւ գուրգուրում եմ, զգւում կարօտով
Քնքուշ դուխը իմ կրծքի վերայ...

Աւ. Դասնակեան